The new descriptors, established through fundamental changes in the economy of the Republic of Armenia in the last decade and obligations, undertaken with the aim to integrate to international devices have called for the necessity of antimonopoly policy. The first step of making a reality of this is the passing of the antimonopoly law. The existence of the latter, along with an effective legal system and competition regulating agendas, promote the effectiveness, development and stability of defending entrepreneurs and consumers.

During last years, great work has been done in RA to form and improve the legislative foundations of antimonopoly regulation and to increase the effectiveness of management system. But still there are lot of drawbacks and obstacles and only after overcoming them, RA could become a state implementing an effective policy of antimonopoly regulation.

ՆՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր,
հոգեբանական գիտությունների դոկտոր*

**ԱՇԽԱՏԱԿԱԳՈՒՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱՄԱԼՐՄԱՆ
ԱՐԴԻ ՆՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ժամանակակից հասարակության առջև դրված կարևոր խնդիրներից է կայուն աշխատաշուկայի ձևավորումը՝ իրեն հափուկ գործառնության կառուցակարգերով, օրինաչափություններով, որակյալ աշխատակազմով և հեռանկարային զարգացմամբ: Մասնագիտական զբաղվածության համակարգի լիակարար կայացումը լոկ փնտրեսական խնդիրների լուծման ճանապարհով, թերևս, անհնարին է. աշխատանքային խմբերի արդյունավետ կենսագործունեության համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հոգեբանական առանձնահատկություններ, այդ թվում՝ աշխատանքային գործունեության և աշխատանքային խմբի՝ կոլեկտիվի հոգեբանական բնութագրերը, հոգեբանական հիմքերի վրա կարարվող մասնագիտական ընտրությունը և աշխատանքի կազմակերպումը:

Նշված հիմնախնդիրների փնտրանքումը հայաստանյան աշխատաշուկայի և զբաղվածության ոլորտի վրա ցույց է տալիս, որ մեր երկրի փոփոխվող սոցիալ-փնտրեսական պայմաններում, նոր՝ շուկայական փոխհարաբերությունների կայացման այս ժամանակահատվածում խիստ արդիական է աշխատանքային կոլեկտիվների կառուցվածքի, գործունեության, կառավարման, նոր կադրերի ընտրության և համալրման, աշխատանքի բաշխման հոգեբանական ուսումնասիրությունը:

Այս փնտրանքումից դիտարկելով աշխատանքային խմբերի և զբաղվածության հիմնահարցը՝ որպես սույն աշխատանքի ուսումնասիրության օբ-

յեկար է ընտրվել աշխատանքային խումբը, իսկ որպես ուսումնասիրության առարկա սահմանվել են մասնագետների ընտրության և համալրման հոգեբանական չափանիշները:

«Աշխատանքային խումբ» հասկացությունն ունի յուրահատուկ ինտերգրալ հոգեբանական մեկնաբանություն. այն գրնվում է «աշխատանք» և «կոլեկտիվ» կարեգործիաների հատման փիրություն: Ուստի և, նպատակահարմար ենք գրնում ուրվագծել նշված վերջին երկու հասկացությունների սոցիալ-հոգեբանական մեկնաբանությունը:

Անձի ակտիվության առաջատար ձևը գիտակցված գործունեությունն է, որի արդյունքում մարդը հասնում է ծագած պահանջմունքների բավարարման համար գիտակցորեն դրված նպատակին: /5/

Մարդու գործունեությունը միշտ ծավալվում է բազմարևոյթ հարաբերությունների համակարգում և ազդում շրջապատող աշխարհի ու մարդկանց վրա, մինևույն ժամանակ պահանջում է մարդկանց մասնակցությունը: Այս փոխադարձ կապը խոսում է այն մասին, որ գործունեությունն իր բնույթով սոցիալական գործընթաց է:

Ժամանակակից հասարակությունը մեծ սոցիալական խումբ է, որն իր հերթին ստորաբաժանվում է բազմաթիվ մեծ ու փոքր օղակների՝ խմբերի /2/: Մոցիալական խումբը երկու կամ ավելի մարդկանցից կազմված հանրույթ է, որի անդամները միավորվել են որոշակի ընդհանուր նպատակի հասնելու, շփվելու կամ համատեղ գործունեություն ծավալելու համար: Բացահայտելով «սոցիալական խումբ» հասկացությունը՝ անհրաժեշտ է նշել, որ ոչ մի խումբ լիովին մեկուսացված չի լինում, և դա այն միկրոմիջավայրն է, որտեղ անհատը ենթարկվում է սոցիալական ուժերի ազդեցությանը և ինքն իր կողմից ազդեցություն է թողնում խմբի մյուս անդամների և սոցիալական հարակից ինտրիպուտների վրա, ներգրավվում է սոցիալ-հոգեբանական գործընթացների մեջ և սրանձնում սոցիալական որևէ դերակատարում. վերջինս պայմանավորում է անձի սոցիալական դիրքը և կարգավիճակը:

Ամերիկացի հոգևերաններ Դ. Կարտրայթերը և Ա. Ջանդերը փալիս են սոցիալական խմբի բնութագրերի «ռեեստր» համաձայն որի խումբ է համարվում այն հանրությունը, որտեղ անհատները.

- հաճախ են փոխազդում իրար հետ,
- ճանաչում են միմյանց որպես միևնույն խմբի մասնիկներ, անդամներ,
- կիսում են ընդհանուր նորմեր իրենց հետաքրքրող հարցերի շուրջ,
- մասնակցում են դերային բաժանման ընդհանուր համակարգին,
- նույնացնում են իրենց միևնույն իդեալների և օբյեկտների հետ,
- ընդունում են խումբը՝ որպես որոշակի պահանջմունքների բավարարման աղբյուր,
- գտնվում են կոոպերատիվ, փոխշահավետ համագործակցության մեջ,
- զգում են իրենց մեկ ամբողջության մեջ,
- համակարգում են գործունեությունը փոխափայլի միջավայրին համապատասխան: /4/

Սոցիալական խմբերի փիպավորման համար գոյություն ունեն մի քանի դասակարգման փարաբնականներ: Որպես դասակարգման հիմք ընդունելով խմբի անդամների թիվը՝ փարբերում են սոցիալական մեծ և փոքր խմբեր, իրական և պայմանական, ձևական և ոչ ձևական, փակ և բաց խմբեր: /1/

Մարդկային հասարակությունը սոցիալ- հոգևբանական գործընթացների և հարաբերությունների բարդ ցանց է: Այստեղ առկա է մեծ համակարգի մասնիկ հանդիսացող օղակների փոխներթափանցվածության և կապի կառուցակարգը. յուրաքանչյուր սոցիալական օղակ և ինստիտուտ՝ իր ներքին գործընթացներով, կազմում է մեծ սոցիալական համակարգի կենսագործունեության պարկերը: Այսինքն՝ սոցիումի միկրոմակարդակում տեղի ունեցող գործընթացներն ազդում են մակրոմակարդակի վրա, և՛ հակառակը /3/:

Թեկնածուների որակավորման և աշխատանքի ընդունման գործընթացում հոգևբանական թեստերի կիրառումը մեծամասամբ պայմանավորված է ղեկավարի որոշմամբ:

Ընդունող հանձնախմբերը հիմնականում նախընտրում են իրականացնել մեկ կամ մի քանի հարցազրույցներ: Սակայն, ըստ Վ. Կրավինի /7/, հար-

ցագրույցը չի կարող լիարժեք պարկերացումներ փայ թեկնածուի անձնային և մասնագիտական որակների մասին և պարունակում է սուբյեկտիվ լիզմի բարձր աստիճան:

Բազմաթիվ հեղադրություններ հասարակել են այն փաստը, որ աշխատակազմի ընտրության և համալրման գործընթացը պարտադիր պեպք է ներառի հոգեբանական թեստավորումը: Արհեստավարժ հոգեբանները, թեստավորելով թեկնածուներին, նպաստում են ընտրության գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Արևմտյան զարգացած պետություններում, ուր գործում է մասնագիտական քասթինգի պրակտիկան, հրատարակվել են բազմաթիվ դասագրքեր և ձեռնարկներ՝ աշխատակիցների ընտրության ժամանակ օգտագործվող մեթոդների նկարագրությամբ, որոնցում առաջին հերթին կարևորվում են հոգեբանական թեստերը /6/:

Մի շարք երկրներում գործում է մասնագիտական ընտրության ձևավորված համակարգ ի դեմս հատուկ կազմակերպությունների՝ ռեկրուտերական գրասենյակների, որոնց ծառայություններից օգտվում են ինչպես խոշոր կորպորացիաների, այնպես էլ միջին չափի ձեռնարկությունների ղեկավարներն իրենց աշխատանքային կուլեկտիվները գիտականորեն կազմակերպելու համար:

Անհրաժեշտ է նշել, որ ՏՏ-ում հոգեբանական թեստերը լայն կիրառում չեն ստացել նույնիսկ թափուր աշխատանքային տեղերը համալրելու համար հայտարարվող մրցույթներում: Օրինակ՝ Նայաստանում քաղաքացիական ծառայողների և դատավորների մրցությային կանոնակարգը ներառում է պարտադիր թեստավորում, որը, սակայն, ուղղված է հիմնականում մասնագիտական գիտելիքների գնահատմանը:

Գրականության համակողմանի վերլուծությունը /3, 4, 7/ ցույց տվեց, որ աշխատանքի ընդունելուց օգտագործում են հոգեբանական թեստերի հերնյալ խմբերը՝ 1. ինտելեկտը գնահատող թեստեր, 2. հիշողության

և ուշադրության գնահատման թեստեր, 3. ընդունակությունների թեստեր, 4. անձնային թեստեր, 5. դրդապատճառային համակարգն ուսումնասիրող թեստեր, 6. պրոյեկտիվ թեստերի, 7. միջանձնային հարաբերությունների թեստեր:

Մեր հարցմանը մասնակցած հիմնարկությունների ղեկավարների հետ անց է կացվել մրավոր ընդունակությունների և բնավորության գծերի գնահատման թեստ, որի միջոցով փորձել ենք պարզել, թե որ որակներին են առաջնություն և նախապատվություն փախի ղեկավարները՝ աշխատակազմը համարելու համար մասնագետներ ընտրելիս: Հարցմանը մասնակցել է 30 հոգի, այդ թվում՝ պետական և ոչ պետական կազմակերպությունների 12 ղեկավար, բաժնի պետեր և ավագ մասնագետներ: Օգտագործվել է մասնագիտական ինքնագնահատականի թեստը «Самооценка-25», որը վերամշակվել և հարմարեցվել է աշխատանքային խումբը համարող մասնագետներին գնահատելու համար / Куница В. Н., «Межличностное общение», С.-П 2002, 518-519, 524/: Տրված մրավոր որակները և բնավորության գծերը հարցվածները գնահատել են ըստ կարևորության, և արդյունքում ստացվել է յուրահատուկ մոդել:

Նկատագրության հաջորդ փուլում ուսումնասիրվել է աշխատակազմի ընտրության և համալրման նպատակով կիրառվող մեթոդների ու միջոցների ժամանակակից մոտեցումները:

Ելնելով այն իրողությունից, որ այսօր հայ իրականության մեջ մասնագիտական ընտրության նպատակով հոգեբանական թեստավորումը չունի լայն փարածում, մեր կողմից հարցված կոնսուլտանտների հետ ունեցած զրույցում փորձեցինք պարզել, թե աշխատակազմի ընտրության համար ի՞նչ այլ մեթոդներ են կիրառվում:

Բաժնեպահական ընկերությունների ղեկավարները, որոնց շրջանում անց ենք կացրել հարցումը, նշեցին, որ առաջին տեղում քիչ ծախսատար եղանակներն են ինտերնետային ցանցում տեղադրվող հայտարարությունները, դիմումները համապատասխան արհեստակցական միություններին, ԲՈՒՏ-ներին և տվյալների բազաներին: Հարցվածների տված պատասխան-

ներն ամրապնդվում են հայաստանյան web-ռեսուրսների փոխալներով: Օրինակ՝ www.armjob.am, www.port.am, www.freenet.am/job հայկական կայքերում փնտրվող հայտարարություններն արդարացնում են իրենց հավակապես քարտուղարներ, մենեջերներ, ծրագրավորողներ, փնտրվողական փնտրվողականների մասնագետներ փնտրելու դեպքում, սակայն ակնհայտ է, որ այս փոփոխվող անհնարին է լիարժեք և հավասարի փնտրվողություն ստանալ հայտարարությանն արձագանքողի մասին: Ուստի անհրաժեշտ է շարունակել ծանոթությունը նրա հետ համապատասխան պայմաններում:

Նայաստանում լայն տարածում ունեն նաև փոփոխվող մամուլում տրվող հայտարարություններն ազատ աշխատատեղերի համար, իսկ վերջին շրջանում սրբազան են թերթեր և ամսագրեր, որոնք մասնագիտանում են հենց նմանափայ հայտարարությունների ուղղությամբ:

Սակայն մեր հարցման մասնակիցների 42 %-ը գտնում է, որ թերթերում տրված հայտարարությունները չեն արդարացնում իրենց, քանի որ 100 արձագանքողներից միայն մեկն է իրականում համապատասխանում խմբի կողմից ներկայացվող պահանջներին:

Նարգվածների 55 % -ը հավանում է բարձր գնահատել ռեկրուտերական գրասենյակների աշխատանքը, որտեղից ֆիրմա են ուղարկվում արդեն նախնական ընտրություն անցած հավակնորդները: Տնտեսության համար ճգնաժամային փուլերում արդյունավետ և օպերատիվ կերպով է գործում այսպես կոչված «*head hunting*» - ի՝ ուղղակի ընտրության եղանակը, որի էությունը կայանում է նրանում, որ ընկերությունն անմիջապես աշխատանքի է հրավիրում կոնկրետ մասնագետի, որն արդեն գտնվում է որևէ այլ հիմնարկում և այնտեղ հասել է լավագույն արդյունքների. այս եղանակը կիրառվում է հիմնականում բացառիկ մասնագիտությունների փնտրման համար: Սակայն կարևոր նախապայման է, որ ընկերությունն առաջարկի թեկնածուին աշխատանքի լավ պայմաններ, շուկայականից գոնե 15 %-ով բարձր աշխատավարձ, այսինքն՝ նոր առաջարկը պետք է

ազդի դրդապարճառային ոլորտի վրա, քանի որ *«head hunting»* - ի սկզբունքը որակյալ մասնագետի «զայթակղումն» է:

Աշխատանքի ընդունող հանձնախմբի կամ ռեկրուտերական ֆիրմայի խնդիրն է ընտրել այնպիսի հավակնորդների, որոնք իրենց անձնական և մասնագիտական բնութագրերի շնորհիվ, ներգրավվելով աշխատակազմի մեջ, ի զորու են հասնել ավյալ կոլեկտիվի առջև դրված նպատակների: Այսինքն՝ հավակնորդը կամ թեկնածուն պետք է բավարարի որոշակի չափանիշների, սակայն հենց այդ չափանիշների գնահատման համակարգը և տեխնոլոգիան իրենց հերթին պետք է համապատասխանեն որոշակի պահանջների:

Այսպես, գնահատման տեխնոլոգիան պետք է լինի.

- **օրլեկտիվ**՝ անկախ որևէ մասնավոր կարծիքից կամ դատողություններից ,
- **հուսայի**՝ անկախ այնպիսի իրադրական գործոնների ազդեցությունից, ինչպիսիք են, օրինակ՝ եղանակը, պրամատությունը, նախկին հաջողությունները և անհաջողությունները,
- **հավաստի**՝ պետք է գնահատվի մասնագիտական հմտությունների և գիտելիքների տիրապետման իրական մակարդակը,
- **կանխատեսման հնարավորությամբ**՝ գնահատումը պետք է տվյալներ տա այն մասին, թե գործունեության որ տեսակներին է ընդունակ մարդը պտրենցիալում,
- **համակարգային**՝ պետք է գնահատվի ոչ թե աշխատանքային խմբի յուրաքանչյուր ատանձին անդամը, այլ խումբն ամբողջությամբ,
- գնահատման ընթացքը և չափանիշները պետք է լինեն հանրամատչելի և ոչ թե նախատեսված մասնագետների նեղ շրջանակների համար,
- կարևոր է, որ գնահատման գործընթացը չապակազմակերպի աշխատանքային մթնոլորտը և աշխատանքի բնականոն ընթացքը. այն

պետք է ներկատուցվի խմբի կադրային գործունեության մեջ նպաստելով դրա զարգացմանը և կարարելագործմանը:

Նախկանշական է, որ գնահատման համակարգի առջև դրվող պահանջները գործում են ինչպես խմբի աշխատանքային գործունեության գնահատման, այնպես էլ հնարավոր թեկնածուի մասնագիտական և անձնային որակների գնահատման համար:

Եթե գնահատման համակարգը համապատասխանում է բերված բոլոր չափանիշներին, ապա այն ենթակա է կիրառման: Որպես կանոն, աշխատանքի տեղավորվելու համար համապատասխան թեկնածուն կամ հավակնորդը պետք է անցնի ընտրության մի քանի աստիճան, պետք է փորձվի ընտրության փուլային հիերարխիայի կողմից: Կախված ձեռնարկության գործունեության բնույթից՝ այն ունի ընտրության փուլերի յուրահատուկ հոգևրանական առանձնահատկություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Նալչաշյան Ա. Ա.*, «Սոցիալական հոգևրանություն», Երևան 2001
2. *Куницина В. Н., Казаринова Н. В.* «Межличностное общение », С.-Петербург, 2002
3. *Мескон М. Х., Альберт М., Хедоури Ф.* «Основы менеджмента», Москва 1994
4. *Михайлова Е. К.*, «Как оценить кандидата ? », Москва 2000
5. *Немов Р. С.* «Психология », Москва 2001
6. *Симоненко С. А.*, «Особенности рекруитмента в России», С.-Петербург 2001
7. *Травин В. В., Дятлов В. А.*, «Основы кадрового менеджмента», С.-Петербург 1992

HRANT AVANESYAN

*Professor of the chair of Psychology
of Yerevan State University,
Doctor of Sciences (Psychology)*

**PSYCHOLOGICAL PROBLEMS OF SELECTION
AND RECRUITMENT OF THE STAFF**

The deals with the problem of correct and professional selection which is very vital in Armenia. The analysis of specific features of employing in the whole world is given, and particularly in Armenia. The role of psychological testing as the most important method of diagnosis of individual's features and abilities when applying for a job is shown. The article also describes the results of surveys of managers (heads) to find out those characteristic features which are advantageous while selecting the staff.

ԼԻԼԻԹ ԱՐԱՄՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
հոգերանության ամբիոնի ասպիրանտ*

**ՍԱՏՄԱՆԱՄԵՐՉ ԳՈՏՈՒ ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԻ ԱՆՉԱՆՅ ՆՈԳԵՎԻ-
ՃԱԿՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՏԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՈՒՄ**

XX դարի 80-ական թվականների վերջին և 90-ականների սկզբին երկրաշարժի, գաղթի, պայերազմի, սոցիալ-փնփեսական ցնցումների հերսանքով Տայասրանում սրեղծված արփակարգ իրավիճակը ծանր անդրադարձավ բնակչության առողջության վրա: Եթե հանրապետության կենտրոնական փարաձքն ինչ-որ չափով հեռու էր սոցիալ-փնփեսական այդ ցնցումներից, ապա սահմանամերձ գոտու բնակչությունը նշված հանգամանքի և դարաբաղյան պայերազմի գինադադարի պայմանագրի բացակայության պարճառով մինչ այսօր գրնվում է կենսապարերազմական վիճակում, որովհերսն դեռևս շարունակվում են կրակոցները, անակնկալ հարճակումները և այլն: Այսպիսի իրավիճակը մարդկանց պահում է մշրական լարվածության, փազնապի, վախի մեջ, որոնք, փրականորեն ազդելով օրգանիզմի վրա, առաջ են բերում ֆունկցիոնալ և կառուցվածքային փոփոխություններ: Մրանք գրականության մեջ բնորոշվում են որպես հերվնասվածքային սթրեսային վիճակներ (5, 6) «պարերազմական սինդրոմ» (4, 5), վնասվածքային ներոզներ (2, 3, 6) և այլն:

Այսպիսի հոգևվիճակների վրանգավորությունն այն է, որ կանխարգելման և վերականգնողական աշխարանքների բացակայության դեպքում դրանք ժամանակի ընթացքում վերաճվում են օրգանիզմի առողջության սպառնացող թույլ օղակների աստիճանական հյուճման:

Առողջության համաշխարհային կազմակերպության (ԱՏԿ) կողմից առողջությունը բնութագրվում է որպես հիվանդությունների, վնասվածքների

բացակայության, ինչպես նաև մարմնական, հոգեկան և սոցիալական լիարժեք ապահովվածության վիճակ: Ըստ Ա. Մ. Իգուրկինի (1973)՝ «առողջությունը գործունեության ազատություն է, հասարակական և անհատական կյանքում ֆիզիոլոգիական և մտավոր գործընթացների արդյունավետության պարզադիր պայման:

Դիտարկումները և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Նայաստանի սահմանամերձ շրջանների միջին տարիքի անձանց առողջության մակարդակը նշված բնութագրերի և ոչ մի պայմաններին չի համապատասխանում:

Նաշվի առնելով այս հանգամանքը, նպատակ ենք դրել ուսումնասիրել սահմանամերձ գոյություն միջին տարիքի անձանց հետվնասվածքային դրսևորումների փոխակերպման առանձնահատկությունները հոգեկան առողջության բնութագրերում: Ներագոյությանը մասնակցել են Վայքի, Սիսիանի, Կապանի, Իջևանի և Ճամբարակի սահմանամերձ գյուղերի 40-65 տարեկան 60 անձիք, որոնցից 30-ը կանայք և 30-ը՝ տղամարդիկ:

Բացահայտվել են մարդկանց առողջության վրա ազդող բացասական գործոնների ամբողջությունը, առողջության և երջանկության ինքնագնահատականի մակարդակը, փոխակերպման աստիճանը, օրգանիզմի հոգև-ֆիզիոլոգիական փոփոխությունների շարժը և այլն:

Շուրջ մեկ տարի տևող հետազոտությունների վերլուծությունը բացահայտեց հետևյալը. չնայած կենսագործունեության համար անբարենպաստ պայմանների ընդհանրությանը՝ տղամարդկանց և կանանց մոտ նկատվում են օրգանիզմի վրա ազդող բացասական գործոնների կարևորման տարբերություններ, որոնք համապատասխանաբար առաջ են բերում տարբեր հոգև-ֆիզիոլոգիական տեղաշարժեր: Այսպես, կանայք առանձնացնում են հիմնականում օրգանիզմի վրա ազդող սոցիալ-տնտեսական բնույթի անբարենպաստ գործոններ, տղամարդիկ՝ հիմնականում հոգևբանական, որոնք կապված են պատերազմի, մարդկային ու նյութական կորուստների և այլնի հետ: Մակայն երկու խմբերում էլ նկատվում է հոգև-ֆիզիոլոգիական փոփոխությունների ընդհանրություն: Տագնապ-վախ, լարվածություն, անվստահ-

հույություն, օրգանիզմում ընդհանուր թուլություն, քոր, սրտի զարկերի, շնչառության հաճախության կտրուկ փոփոխություն և այլն: Օրգանիզմի համար ունենալով պաշտպանական բնույթ՝ միևնույն ժամանակ սրանք խոսում են արդեն տեղի ունեցող հետվնասվածքային լուրջ փոփոխությունների մասին, որոնք կարող են օրգանիզմի վրա թողնել բացասական հետևանքներ: Էլեկտրամաշկային դիմադրության ցուցանիշները (ԷՄԴ), ինչպես նաև սրտի զարկերի հաճախությունը (ՍԶՏ) նույնպես վկայում են օրգանիզմում գոյություն ունեցող խոր տեղաշարժերի մասին, որոնք առայժմ դրսևորվում են գերհոգնածության, լարվածության, ապատիայի ձևերով: Իսկ տեսական լարվածությունը հյուծում է օրգանիզմը, կտրուկ կերպով իջեցնում փարբեր համակարգերի աշխատունակությունը: Վերջինս օրգանիզմը կարող է հասցնել քայքայման, որը համապատասխանում է Ն. Սեյլեի (1985) հարմարվողական համախարանիչի երրորդ՝ քայքայման փուլին:

Բարձր է նաև խմբերում ընդգրկված անձանց տագնապալիության մակարդակը, որի Ֆիզիոլոգիական հիմքում ընկած է արյան բաղադրության մեջ փարբեր կորտիկոիդների խիստ շարացումը, ինչը հանգեցնում է օրգանիզմի թույլ օդակների վթարային վիճակի:

Օրգանիզմում գոյություն ունեցող հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների այսպիսի պայմաններում հետագուրվել են նաև առողջության և երջանկության ինքնագնահատականի մակարդակը՝ համանուն սանդղակի միջոցով (Դեմբա-Ռուբինշտեյն, 1982):

Նարկ է նշել, որ երկու խմբերում էլ առողջության և երջանկության գնահատականներն արտահայտվում են մեծմասամբ հորիզոնական առանցքից ցածր – նշանով (60 %՝ կանանց մոտ, 55 %՝ տղամարդկանց):

Առողջության հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների այսպիսի արտահայտվածությունը խոսում է կանանց և տղամարդկանց ցածր աշխատունակության, արտահայտված սթրեսային վիճակի, զանազան հիվանդությունների և հոռետեսական փրամադրությունների առկայության մասին:

Դ.Վեննդիկերովի (1980) բնութագրմամբ՝ առողջությունն օրգանիզմի և միջավայրի միջև դինամիկ հավասարակշռությունն է, որի դեպքում կենսաբանական, սոցիալական գործոնների ազդեցությամբ պայմանավորված՝ մարդու անհատական առանձնահատկությունները, ֆիզիկական, հոգևոր և այլ ընդունակություններն արտահայտվում են լիարժեք և համաչափ: Ինչպես տեսնում ենք, այս բնութագիրը ևս չի համապատասխանում մեր համակարգի՝ առողջության և ոչ մի ցուցանիշի:

Ներագործության արդյունքների այսպիսի ցածր մակարդակը կարելի է բացատրել փարբեր տեսանկյուններից: Կարծում ենք, որ այն հզոր սթրեսորները, որոնք ժամանակի ընթացքում ազդել են այդ մարդկանց օրգանիզմի վրա, երբ նրանք գտնվում էին երիտասարդական հասակում, մինչև այսօր դեռևս մնում են որպես հոգեկան վնասվածքի հիմնական պատճառներ և իրենց հետագա բացասական ազդեցությամբ մարդկանց համար հոգեկան վնասվածքի աղբյուր են հանդիսանում: Չնայած ժամանակի ընթացքում դրանք փոխհարուցվել են ինչ- որ ձևերով, սակայն վնասվածքի աղբյուրը և հերկանքն առայժմ մնում են նրանց հոգեկանում և օրգանիզմի մյուս համակարգերում:

Դիտումները ցույց են տալիս, որ սահմանամերձ շրջանների բնակչության մոտ հաճախակի են սիրտանոթային, գագափոխանակության, մարտոդական, հենաշարժական համակարգերի հիվանդությունները: Շաբերի մոտ նկատվում է առողջական վիճակի փոփոխության նկատմամբ ընդգծված հիվանդագին ուշադրություն: Նոգեբանական առումով այսպիսի վարքը նույնպես դիտարկվում է որպես հերկանակվածքային, փոխհարուցվող պաշտպանական ռեակցիա (4, 5, 6): Սահմանամերձ գոտու ազգաբնակչության համար բավականին լուրջ գործոն է այսօր սոցիալ-քաղաքական, տնտեսական կապերից հեռու մնալը, որը, ինչ խոսք, նույնպես տնտեսական ազդող սթրեսոր է, ինչն առաջին հերթին անդրադառնում է այսօր իրենց տեղը չգտնող, շաբերի կողմից իրենց ձախողակ համարող մարդկանց օրգանիզմի և գիտակցության վրա:

Բնակավայրերի մոտիկությունը վրանգի աղբյուրներին կենտրոնի կողմից իրենց լքված, մոռացված զգալը հետագուրվողների մոտ առաջ են բերում հուսալքվածություն, կենտրոնում ապրող մարդկանց, կառավարության կողմից լքված մարդ լինելու զգացում և այլն: Մրանք գործոններ են, որոնք մշտական լարվածության, տագնապի, վախի և անհանգստության մեջ են պահում նրանց՝ անդրադառնալով երկու սեռերի հոգեկան և ընդհանուր առողջության վրա: Մյուս կողմից էլ՝ վերջին տարիներին կարուկ կերպով նվազել են մշակութային, գիտական, տեղեկատվական, արվեստի միջոցների հետ շփումը, ինչը նրանց պահում է հոգեկան քաղցի վիճակում: Վերջին հանգամանքը նպաստավոր հող է ստեղծում հոռեպեսական փրամադրությունների, անձի՝ ինքնագնահատականի անկման, իրերի, երևույթների ոչ ճիշտ արժեքավորման, ապագայի նկատմամբ թերահավատության զգացման համար:

Մարդը միջավայրի բոլոր իրադարձությունների, առավել ևս անբարենպաստ փոփոխությունների նկատմամբ ցուցաբերում է որոշակի վերաբերմունք՝ հուզական ապրումների ձևերով: Այս առումով, ինչպես ուրախությունը, այնպես էլ վիշտը, դժբախտությունը, սուգը կարիք ունեն մարդու կողմից լիարժեք ապրվելու: Ապրումների մասնավորապես, ոչ լիարժեք հաղթահարումը, դրանց չմեկնարանելը մարդու հոգեկան ոլորտում թողնում են «նստվածքային, մնացորդային» հետքեր, որոնք մնում են ենթագիտակցության մեջ՝ որպես հետվնասվածքային բացասական հոգեվիճակներ: Նման պայմաններում մեր համակազմի համար հետվնասվածքային ապրումները դրսևորվում են միջավայրի պայմանների, իրավիճակի, իրականության նկատմամբ անհարմարողական ռեակցիաների ձևերով:

Պատերազմից հետո քաղաքացիական բնակչության և զինվորների համար վախն ու տագնապը հիմնական գերակշռող ապրումներն են հանդիսանում: Ինչպես նշում է Կոուլպենդը, «մարտից հետո քաղաքացիական ազգաբնակչության, զինվորների մոտ նկատվում է ընդգծված անտարբերություն: Նրանց մոտ հաճախ բացակայում է դեմքի արտահայտությունը:

Նրանց հայացքը դառնում է դաբարկ, աչքերը՝ անիմաստ: Այդ անբարբե-
րությունը հաճախ բերում է նրան, որ նրանք կորցնում են հավասար ամեն ին-
չի նկատմամբ: Միտում է նկարվում բարոյական նորմերի անտեսման: Նա-
ճախ նկարվում է ընկճվածության, ինքնամոտիվացման դրսևորում, որի
պատճառն ամենաբարբեր բնույթի կորուստներն են, այդ թվում նաև հոգե-
կան և ֆիզիկական առողջությունը:

Ինչպես նշում է Ն. Սելյեն, օրգանիզմի հարմարվելու ունակությունը, կամ
ադապտացիոն էներգիան անսահման չէ: Օրգանիզմի հոմեոստազի պահ-
պանման համար կարևոր դեր է խաղում հիպոթալամուս-հիպոֆիզ և մակե-
րիկամների կեղևի առանցքը, որը մասնակցում է նաև շար հիվանդագին
երևույթների ուժեղացմանը: Սթրեսորը, գրգռելով հիպոթալամուսը (այդ
գրգռի փոխանցման ուղիները մինչև վերջ պարզված չեն), առաջացնում է
մի նյութ, որն ազդանշան է փալիս հիպոֆիզին՝ արյան մեջ արտադրելու ադ-
րենալինկորտիկոտրիպ հորմոն (ԱԿՏ): Դրա հետևանքով ուրցագեղձը կույզ է
գալիս, և առաջանում են շար այլ գուգրնթաց հիվանդագին փոփոխություն-
ներ, այն է՝ ավշահանգույցների հետաճ, բորբոքային ռեակցիաների և շաքա-
րագույացման արգելակում:

Նկարվնասվածքային ռեակցիաների մյուս փիպական հատկանիշը խոցի
առաջացումն է մարտոդական ուղիներում, սրամոքսում և աղիներում:
Դրանց առաջացմանը նպաստում է արյան մեջ կորտիկոտրիպի բարձր պա-
րունակությունը (5): Սակայն ինքնավար նյարդային համակարգը նույնպես
մեծ դեր է կատարում դրանց առաջացման մեջ:

Այսպիսով, հետազոտության արդյունքների հիման վրա հանգել ենք
հետևյալ եզրակացությունների.

1. սահմանամերձ գոտու միջին փարիքի մարդկանց առողջության ցու-
ցանիշները չեն համապատասխանում ՆԱԿ-ի կողմից մշակված առողջույթ-
յան բնութագրերին: Դրանք համապատասխանում են հետվնասվածքային
վիճակների հոգեֆիզիոլոգիական բնութագրերին,

2. հետվնասվածքային փոփոխությունները փակական ժամանակաշրջա-
նում վերականգնողական աշխատանքների բացակայության պատճառով

վոխակերպվում են առողջության ապակայունացման և անձի ինքնագնահատականի ցածր մակարդակի,

3. սահմանամերձ գոյու բնակչության հոգեկան առողջության պահպանման և հոգեհիգիենայի ապահովումը պահանջում է երկարապն վերականգնողական աշխատանքային ծրագրերի մշակում և դրանց անմիջական կիրառում,

4. սահմանամերձ գոյու բնակչության հոգեկան առողջության պահպանման հիմնախնդիրը հանդիսանում է երկրի համար ռազմավարական կարևորություն ունեցող բժշկահոգեբանական հիմնախնդիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Արամյան Լ. Յու.* Սահմանամերձ գոյու երիտասարդների հերպարերազմյան ժամանակահատվածի հոգեվիճակների դրսևորման առանձնահատկությունները, ԵՊՆ-ի հոգեբանության ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 26-37:

2. *Մկրտումյան Մ. Պ.* Արավակարգ պայմաններում անձի հոգեբանական վերականգնման տեխնիկան, Երևան, 1997, 114 էջ:

3. *Մկրտումյան Մ. Պ.* Պարերազմից հետո զինվորների սոցիալ-հոգեբանական հարմարման և վերականգնման առանձնահատկությունները. «Զինձառայողների համակողմանի դաստիարակության հիմնահարցերը» գիտագործնական կոնֆերանսի երևույթներ, Երևան, 1996, էջ 105-112:

4. *Агель Я.* Стресс; его военные следствия-психологические аспекты проблемы. В кн.: Эмоциональный стресс, под ред. А. Леви, А. Медицина, 1970, с. 225-260.

5. *Баруа С.* Травматические неврозы. Париж, Деовод, 1988, стр. 216.

6. *Крокк А.* Обзор последствий психических травм. Травматические неврозы, состояние посттравматического стресса и другие последствия, Париж, 1991, с. 34.

LILIT ARAMYAN

*Post-graduate student of the chair
of Psychology of Yerevan State University*

**FEATURES OF TRANSFORMATION PSYCHOLOGICAL STATES OF
MIDDLE-AGED PEOPLE OF THE BORDERING ZONE IN THE
CHARACTERISTICS OF PSYCHIC HEALTH**

People living in the bordering zone were left outside the attention of reanimation and general medical service and thus are still in post-traumatic stress condition. Post-traumatic psychic conditions transform in the people's general and psychic health characteristics. They reveal in various bodily diseases, negative functional changes of the psychic sphere. These changes are reflected in low level of neuro-psychic instability and general working ability of individuals' stress factors.

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՏՊԿ ակադեմիայի
քաղաքագիտության ամբիոնի վարիչ,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

**ՆՈԳՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿԱՌՈՒՅՎԱԾՔՈՒՄ**

Ժողովրդավարական անցման գործընթացում գրավոր հայ հասարակությունում րեղի է ունենում ընտրանու կերպափոխություն և ինքնահասարակում: Ակնհայտ է, որ հեղափոխական ցնցումներից խուսափելու, զանգվածների մարզինալացումը կանխելու, սոցիալական երկխոսություն հասարակելու նկարառումներով անհրաժեշտություն է առաջացել վերաինասարավորել ընտրանու րեսության ուսումնասիրման քաղաքակրթական հարացույցը: Նենց այս նկարառումներով էլ ուսումնասիրել ենք ընտրանու հոգնականության հիմնահարցը, քանի որ ժողովրդավարացման երրորդ ալիքի ներքո անցում կարարող երկրներում (այդ թվում՝ ՏՏ-ում) րեղի ունեցող արմարական փոփոխությունները քաղաքական ընտրանուն գործատույթի առումով դրել են մենաշնորհային կարգավիճակում, մինչդեռ ակնհայտ է, որ լավ կառավարում կարելի է իրականացնել միայն րնրեսական, մշակութային, ռազմական, ռազմավարական ընտրանիների փոխհամաձայնեցված գործունեության շնորհիվ:

Ընտրանու րեսությունը՝ որպես ամբողջական համակարգ, ձևավորվել է XIX-XX դարերի սահմանագծին: Որոշիչ դեր է կարարել այն հանգամանքը, որ զարգացած երկրներում արդյունարերացման հերևանքով հասարակված «անի բևեռներ» ընդգրկվեցին մեծ թվով զանգվածներ, որոնք ինքնահասարակելու և բարեկեցիկ աարելու ակնկալիքով խզեցին իրենց կապն ավանդական միջավայրի հեր և ընդգրկվեցին արդյունարերական զարգաց-

ման հորձանուր: Սակայն բախվելով «աճի բևեռների» բյուրոկրատական կառուցակարգերին, արդեն իսկ մարզինալացված զանգվածները, չկարողանալով «երջանկանալ», պայքար ծավալեցին կառավարման համակարգ ներթափանցելու համար: Եվ աստիճանաբար ղեկավար դեր գրավելով, զանգվածները խորտակեցին ընտրյալ փոքրամասնության առասպելը: Քաղաքական կառավարման ռացիոնալացման նկատառումներով ընտրանուրեսության հիմնադիրներ Վ.Պարեպոն, Գ.Մոսկան ու Ռ.Միխևսը, վերլուծելով Եվրոպայում և Ռուսաստանում փրեյդի ունեցող հեղափոխություններում զանգվածների ու ընտրանու փոխհարաբերությունները, հասարակական կյանքի ժողովրդավարացման գործընթացում գլխավոր դերակատարումը վերապահեցին քաղաքական ընտրանուն:

Ընտրանու րեսության հիմնադիրները համակարգեցին իմաստուն փիլիսոփաների կողմից կառավարվող «իդեալական պետության» պատկերը նկարած Պլատոնի¹, մարդկության պարմության մեջ ականավոր մենակյաց-հերոսների առաջնային դերը մարնանշած Տ.Կարլեյլի² և սոցիալ-դարվինիստների, ինչպես նաև Ֆ.Նիցշեի «զերմարդու» հայեցակարգերը, համաձայն որոնց՝ այդպե նկարմամբ գերիշխանություն հաստատելու ձգտումը դիտարկվում էր որպես անսպառ մարդկային մղում: Այս մտրեցման հետ համահունչ է նաև Թ.Նորբսի րեսակերը, ըստ որի «նոր և լայն իշխանություն ստանալու անդադար և հզոր ցանկությունը» ներհատրոկ է մարդկային էակին, և դա ավարտվում է «միայն մահվան հետ»³:

Բոլոր վերը նշված մրածողներն էլ համամիտ էին նրանում, որ յուրաքանչյուր սոցիալական կառույցին անխուսափելիորեն հատկացվում է հասարակության «նկարմամբ» բարձրացող, նրան զարգացման նպատակներ առաջադրող ու որոշակի արտոնություններից օգտվող «արարիչ անձանց» սահմանափակ շերտը: Ընտրանու նկարմամբ մնացած հասարակությունը

¹ *Платон*, Собр. соч. Т.3, М., 1971.

² *Карлейль Т.*, Герои, почитание героев и героическое в истории. – *Карлейль Т.* Теперь и прежде. М., 1994.

³ *Гоббс Т.*, Соч. Т.1, М., 1989.

նախնառաջ վերարտադրողական գործառույթ իրականացնող ոչ արարիչ գանգված է: Արարիչ փոքրամասնության նման հակադրումը կառավարվող «գանգվածին» հիմնականում բնորոշ է իրավացի մրաձող Պարեպոյին, որը մեծապես նպաստել է ընտրանու գիտական տեսության վերածմանը յուրահատուկ գաղափարախոսության կամ քաղաքական ուսմունքի:

Մինչև ընտրանու ժամանակակից տեսությունների առաջացումը սոցիալական գիտության մեջ «ընտրանի» եզրի (տերմինի) իմաստային բովանդակությունը հիմնականում սահմանափակվում էր երկու բաղադրիչներով: Ընտրանու անհրաժեշտ հատկանիշներ էին համարվում՝ ա) համապատասխանությունը տվյալ հասարակությունում ընդունված սոցիալական նորմների չափանիշներին, բ) ազդեցությունը՝ սոցիալական կառուցվածքը ձևափոխելու կամ այն արդեն կայացած վիճակում պահպանելու նպատակով: XIX դարից «ընտրանի» եզրն սկսեց կիրառվել սոցիալական ստորադասական համակարգում բարձր դիրք զբաղեցնող խմբերի նկատմամբ: Թվարկները ընտրանու՝ քաղաքական գիտության մեջ առավել տարածված սահմանումները, որոնք մարնանշում են դրա ներկայացուցիչների համար անհրաժեշտ որակները: Ժամանակակից քաղաքական գիտության մեջ ընտրանի են համարում՝

- իրենց գործունեության ոլորտում գնահատման բարձրագույն չափանիշ ստացած անձանց (Վ. Պարեպո).
- դեպի իշխանությունը կողմնորոշված, քաղաքականապես առավել գործուն սուբյեկտներին (Գ. Մոսկա).
- բացառիկ մրավոր կարողություններով և պատասխանատվության բարձրագույն զգացումով օժտված մարդկանց (Խ. Օրբեզաի Գասեթ).
- հասարակական կյանքը կարգավորող կազմակերպություններում և ինստիտուտներում ֆորմալ իշխանությամբ օժտված բարձրագույն օղակի պաշտոնյաներին (Տ. Ռ. Դայ).
- «աստվածառեղծունչ», խարիզմատիկ անձանց (Ժ. Ֆրոյնդ).

- արարիչ գործունեություն ծավալած մարդկանց, որոնք կարողանում են քաղաքական որոշում ընդունել՝ անտեսելով իրենց սեփական շահերը (Է. Ֆրոմ)։
- ոչ սրբազան (ոչ արարիչ) մեծամասնությանը հակադրված՝ հասարակության սրբազան (արարիչ) փոքրամասնությանը (Ա. Թոմսոն)։
- հասարակության մեջ առավելագույն ազդեցություն ունեցող և / կամ նրանում առավել կարևոր գործառույթներ իրականացնող փոքրամասնությանը (Ս. Կելլեր)։
- լիդերներին կամ ցանկացած սոցիալական խմբերի (մասնագիտական, ազգային, տեղային) ակնավոր ներկայացուցիչներին (Մ. Բոդեն)։
- առավելագույն հարստություն ունեցողներին կամ առավելագույն հեղինակություն վայելողներին (Ն. Լասուել)։
- իշխանական լիազորություններով օժտվածներին (Ա. Էյզենհայմ)։

Տիմոթիուսը վերը նշված սահմանումների վրա՝ ժամանակակից հեղափոխողները «*քաղաքական ընտրանի*» հասկացության բովանդակությունը որոշում են՝ ելնելով իրենց դավանած հայեցակարգային մտերցումներից, որոնցից առավել ազդեցիկներն են՝ ա) **դիքթայինը** (կառուցվածքային, կազմակերպական), որի շրջանակներում անհատի կամ խմբի պատկանելությունն ընտրանում որոշվում է հասարակության պաշտոնական սոցիալ-քաղաքական կառուցվածքում նրանց դիրքով՝ հատուկ սոցիալական որակների (օրինակ՝ Մոսկայի և Միխելսի նշած կազմակերպական ունակությունների) առկայության դեպքում, բ) **գործառնականը** (արդյունքային, որոշումային), որի համաձայն, նշված կարեգործիային են դասվում քաղաքական որոշումներ կայացնող կամ դրանց կայացման վրա էական ազդեցություն գործող մարդիկ (տվյալ մտերցումը փարանջատում է իշխանության «ձևական» և «իրական» կողմերի հասկացությունները), գ) **ընկալողականը** (*ռեցեսսիվություն*), որը որպես բնակչության այս կամ այն խմբի «ընտրանիության»

կարևորագույն չափանիշ է նշում քաղաքական ազդեցությունը, դ) **պնակ-ասկանը** («ընկերություն ըստ ունեցվածքի»), որի կողմնակիցները ընտրա-նու դիրքերը համեմատելիս հատուկ ուշադրություն են դարձնում արտադրության միջոցների առկայությանը և դրանց նկատմամբ վերահսկողությա-նը: Կարծում ենք, որ իբրև քաղաքական ընտրանու հեղափոխման հատուկ ուղղություններ կարելի է առանձնացնել նաև *վարքաբանական* և *քաղա-քակրթական* մոտեցումները:

Ընտրանու հեղափոխման թվարկված մոտեցումներից յուրաքանչյուրի շրջանակներում մշակվել են նաև տվյալ երևույթի ծագումնաբանության պարզաբանման փորձեր եղանակները: Դիրքային մոտեցման կողմնակից Գ. Մոսկան ենթադրում էր, որ «ընտրյալությունը» («էլիտիզմը») (այսինքն՝ հասարակությունում ընտրանու առկայությունը) պայմանավորված է հենց սոցիալական կազմակերպության բնությամբ: Նրա կարծիքով, քաղաքական իշխանության համակենտրոնացումը փոքրաթիվ անձանց ձեռքերում ան-խուսափելիորեն հանգեցնում է որոշակի յուրահատուկ հանրության առա-ջացմանը, որն ընդունակ է, «միավորելով իր՝ փոքր ձևերով արտահայտ-ված ջանքերը, հեշտությամբ հաղթանակ փանել միմյանց միջև փոխզիջում չգրած և, այդ պատճառով «դեմ առ դեմ» մարտնչող հազարների նկատ-մամբ»: «Դեպի քաղաքական (կառավարող) դասակարգ ելք բացող ընդհա-նուր հարկություններն են», ըստ Մոսկայի, «ազգային խիզախությունը, հարստությունը, ծագումը և անձնական արժանիքները, տեղը եկեղեցական ստորակարգության մեջ, կառավարման արվեստը»¹: Ձգտելով խուսափել տերմինաբանական խառնաշփոթից՝ Մոսկան հստակ փորձերակում է առանձնապես կարևոր գործառնությունների իրականացման համար ձևավոր-վող ավանդական ընտրանիները և նրանց, ում դերը հասարակության մեջ ավելի շար ցուցադրական է՝ բնակչության վրա առանձնահատուկ զգաց-մունքային ներազդեցությամբ սահմանափակվող:

¹ *Моска Г.* Правящий класс. – «Социс», 1994, №10, с.180.

Մաքիավելիստական դպրոցի ներկայացուցիչների մոտեցումները լրամշակելով՝ Ռ. Դարենդորֆը փորձում է ընտրանու երևույթը նույնականացնել դրա դասակարգման, այսինքն՝ դրա բաղադրիչ մասերը թվարկելու միջոցով և, գործառնական մոտեցում օգտագործելով, ընտրանուն դասվող անձանց թվում նշում է՝ 1) տնտեսական լիդերներին, 2) քաղաքական լիդերներին, 3) պրոֆեսորներին և ուսուցիչներին, 4) հոգևորականությանը, 5) ականավոր լրագրողներին, 6) գինվորականներին, 7) դատավորներին ու փաստաբաններին¹: Սակայն նման դասակարգման մեջ չի արտացոլվում նշված սոցիալական խմբերից յուրաքանչյուրի ազդեցությունը հասարակության համար նշանակալից որոշումների ընդունման վրա: Ձգարելով լրացնել ընտրանու տեսությունը «նույնաբանության» վերածող այս բացը՝ Ջ. Բեեգինսկին, ելնելով ընտրանու ձախ ազգայական դպրոցի հիմնադիր Չ. Ռ. Միլսի դրույթներից, «Communism, Marxism, Westexersises» բառարանում նշում է ընտրանու ներսում քաղաքական տեսանկյունից երեք առավել նշանակալից խմբեր՝ *իշխող ընտրանի, գործարար լիդերներ և գինվորականներ*²: Այս երեք խմբերն ամենևին էլ իրարից մեկուսացված չեն: Այս նկատառումներով Միլսը գրում է. «Իշխող ընտրանին կազմված է այնպիսի դիրք զբաղեցնող մարդկանցից, որը հնարավորություն է տալիս նրանց վեր կանգնել սովորական մարդկանց միջավայրից և ընդունել հասարակության համար որակական էություն ունեցող որոշումներ: ...Դա պայմանավորված է հասարակության կարևորագույն ինստիտուտների և կազմակերպությունների հիերարխիկ համակարգում նրանց ղեկավար դերով: Սոցիալական համակարգում նրանք զբաղեցնում են կարևորագույն ռազմավարական հենակետեր, որոնցում կենտրոնացված են իշխանություն, հարստություն և ճանաչում պահանջող բոլոր գործոնները»³: Ակնհայտ է, որ ընտրանին, կառուցվածքային առումով, խիստ տարրոնակ է: Միլսը գրում է, որ ամերիկյան հասարակությունում

¹ *Дарендорф Р.* Современный политический конфликт. Очерк политики свободы / Пер. с нем. М., 2002.

² *Brzezinsky Z.* Kommunism, Marxism, Westexersises. N.Y. 1989.

³ *Миллс Р.* Властвующая элита. Пер. с англ. М., 1959, с.24-25.

կորպորացիաների ղեկավարները, քաղաքագետները, դիվանագետները, պետական բարձրաստիճան ծառայողները և բարձրաստիճան գինվորականները կազմում են ընտրանու միջուկը: Նրանց պաշտպանում, աջակցում, կրթում, ուղղորդում, խորհրդարկական ծառայություններ են մատուցում մտավորականները, որոնք իրենց ռազմավարական մտքի շնորհիվ ներթափանցում են քաղաքական համակարգ և ազդում վերջինիս շրջանակներում ընդունվող որոշումների վրա:

Մեր կարծիքով, հենց այս նկարագրումներով էլ ընտրանու Կրեմլյան շրջանակներում առավել հստակեցվեց մերիտոկրատիայի Կրեմլյանը: Նենվելով Վ. Պարեպոյի, Մ. Յանգի և Դ. Բելի մշակած մերիտոկրատիական ընտրանու բնութագրիչների վրա՝ Կ. Մանհեյմն առաջարկեց ընտրանին սահմանելու մեկ այլ եղանակ: Ըստ դրա, «ընտրանին» «սեփական նվաճումների վրա հիմնված ստորակարգ է»՝ ի փարբերություն «դասակարգի», որին պատկանելությունը որոշվում է ծագմամբ: Այլ խոսքով, մարդը կարող է ընտրանուն միանալ բացառապես անհատական ջանքերի շնորհիվ, օրինակ՝ կառավարման ոլորտում իր ընդունակությունները բացահայտելով: Այնուամենայնիվ, ծնունդով պայմանավորված արտոնությունները պահպանվում են նաև ժամանակակից ժողովրդավարության պայմաններում, երբ միաժամանակ գործում են ծագման, սեփականության և սեփական հաջողության գործոնները¹: Այս Կրեմլյանը կիսում էր նաև Մոսկան, որը պնդում էր, թե «բոլոր կառավարող դասակարգերը պետք է դառնան ժառանգորդող՝ եթե ոչ օրենքով, ապա փաստացի»²:

Վերը հիշարակված բոլոր հայեցակարգերն այս կամ այն կերպ էլնում են ցանկացած (այդ թվում նաև ժամանակակից ժողովրդավարական) հասարակությունում կառավարող խավի անհրաժեշտության և այդ խավի անվիճելի քաղաքական առավելությունների մասին համոզմունքից: Էլիտիստական Կրեմլյանները հիմնականում ուղղորդվում են ժողովրդավարու-

¹ *Манхейм К.* Диагноз нашего времени. Пер. с нем. и англ. М., Юристь, 1997, с.287-288.

² *Моска Г.* Правящий класс. – «Социс», 1994, №10, с.193.

յան մասին չափազանց իդեալականացված պատկերացումների քննադատմամբ, ուստի, պատահական չէ, որ դրանց հիմնադիրները փորձում էին իրենց եզրահանգումները հիմնավորել այժմեականության ամենաներկայացուցչական ժողովրդավարական պետության՝ Միացյալ Նահանգների քաղաքական փորձի վերլուծության օգնությամբ: Սակայն պետք է նշել, որ ԱՄՆ քաղաքական իշխանությունը քննադատության ենթարկելով, Միսսիսիպիի հայրենի է այն կարծիքը, որն այդ երկիրը ոչ թե ժողովրդավարական է, այլ խմբիշխանական (օլիգարխիկ): Թեև ենթադրվում է, որ ընտրողները պետք է ընտրությունների միջոցով վերահսկեն կառավարության գործունեությունը, էլիտիստները համաձայնում են, որ այդ «ուժեղ ձեռքը» իշխանություն և ազդեցություն ունի հասարակության մեջ և կարող է սեփական շահերից ելնելով՝ որոշումներ թելադրել կառավարությանը: Ըստ Միսիսիպիի՝ ԱՄՆ քաղաքական համակարգը բուրգ է, որն ունի երեք աստիճանահարթակ (ընդ որում, չի բացառվում նոր աստիճանահարթակի ձևավորումը): *Մտորիև հարթակը* գրադեցնում է կրավորական զանգվածը, որին թվում է, թե իր արտահայտված դժգոհությամբ (կամ հակառակը՝ աջակցությամբ) մասնակցում է քաղաքականությանը: Փաստորեն, նրանք խամաճիկներ են քաղաքական խաղում: *Միջին հարթակում* խմբային շահերի արտահայտիչ միջին խավն է, հավկապես՝ «սպիտակ օձիքավորները», որոնք կարողանում են մանիպուլացնել «կապույտ օձիքավորներին»: *Վերին հարթակում* գտնվում է կառավարող ընտրանին, որն էլ քաղաքական խաղը վարելու իր ունակությամբ զանգվածներին գերծ է պահում քաղաքական անջարդականությունից և անհանդուրժողականությունից:

Անցյալ դարի XX-ական, ապա 30-ական թվականների կեսերին քաղաքագետներ Ռ. Լինդի և Ն. Լինդի անցկացրած ԱՄՆ հասարակական կարծիքի առաջին լայնածավալ համեմատական հետազոտությունները հասարակացին ժամանակակից հասարակությունում իշխանության բաշխման վերաբերյալ էլիտիստների ենթադրությունները: Նրանք պարզեցին, որ ԱՄՆ միջին քաղաքում իրական իշխանության էին փիրապետում, նախևառաջ, արդ-

յունաբերական ձեռնարկությունների սեփականատերերը: Լինդի աշխատությունից ակնհայտ է, որ քաղաքը կառավարում է «արհեստանոցների հարուստ սեփականատերերից, բանկիրներից, ազգային ընկերությունները ներկայացնող կառավարիչներից և մեկ-երկու ականավոր իրավաբաններից կազմված» մի փոքր խումբ¹, մինչդեռ պաշտոնաբար անձանց տեսարանը նկարագրել էր որպես «մանր փրամաչափի մարդիկ, որոնց տնտեսապես, սոցիալապես և քաղաքականապես արհամարհում է բիզնեսը ներսից վերահսկող խումբը»²: Ամերիկյան քաղաքում իշխանության բաշխման վերաբերյալ Լինդի և Նանթերի եզրակացությունները փորձեցին վիճարկել արևմտյան քաղաքագիտության այլ հոսանքների, նաև՝ քաղաքական հոգնականության ներկայացուցիչները:

Քաղաքական հոգնականության կողմնակիցները (Ջ. Շումպետեր, Ն. Լասուել, Ռ. Ա. Դալ, Պ. Բախրախ) հանդես եկան «ընտրանի» – «զանգված» մակերեսային փարանջատման դեմ: Մերժելով մաքիավելիստական և ժողովրդավարական դպրոցների այն թեզերը, որոնք քաղաքական պահի մեջ քննություն էին բռնում, իրենց առաջարկած տեսակետներով նրանք ստրեղծագործաբար դիտարկում էին քաղաքական խաղը, որն էլ առավել գործառնական նշանակություն ստացավ ընտրանու կողմից կառավարման մոդել մշակելիս: Պլյուրալիստները հենվում էին ոչ թե կառավարողների խմբային շահերի, այլ սոցիալական լայն շերտերի փոխհամաձայնության վրա: Փաստորեն, այս դպրոցի ներկայացուցիչների համար անընդունելի են ընտրանու՝ որպես միասնական, արտոնյալ, համեմատաբար համախմբված մարդկանց խումբ ներկայացնող տեսակետները:

Պլյուրալիստներից ոմանք ընդունում էին ժամանակակից հասարակության ստորակարգային կառուցվածքի մասին էլիտիստների եզրահանգումները, բայց դրանում տեսնում էին հասարակության ճակատագրական թերությունը, ինչը ոչ թե լեգիտիմացում, այլ աստիճանական ուղղում էր պահան-

¹ Lynd R., Lind H. Middle Town in Transition. N.Y., 1937, c.51.

² Նույն տեղը, c.74.

ջում: Օրինակ՝ Միլար, ճանաչելով ժողովրդավարական հասարակության փարանջատումը ընտրանու և զանգվածի, այնուամենայնիվ, մնում էր այդպիսի փարանջատման հակառակորդ, ուստի, ելնելով սկզբունքորեն հակաէլիտար հասարակական իդեալից, ապացուցում էր ամերիկյան և արևմտաեվրոպական ժողովրդավարության սահմանափակությունը: Ըստ Միլսի՝ ընտրանու առանձին խմբերի միջև փարբերությունն ունի գուր գործառնական բնույթ. ըստ էության, դրանք կազմում են իշխանությանը և իշխանական հարաբերություններին իր առնչությամբ միավորված առանձին խմբակցություն: Այդ միասնական ընտրանու ներսում առավելագույն նշանակություն ունեն փնտեսական, զինվորական և քաղաքական խմբակցությունները, որոնք միավորում են իրենց ջանքերը, որպես կանոն, «պահպանողական փրամադրության» գերության մեջ գրվվող զանգվածներին կառավարելու համար: Միլար սուր քննադատության ենթարկեց ԱՄՆ քաղաքական ընտրանուն՝ կառավարման գործընթացում խոշոր սեփականատերերի հեր կապ պահպանելու համար:

«Քաղաքացիական մշակույթը և ժողովրդավարության կայունությունը» աշխատությունում Գ. Ալմոնդն ու Ս. Վերբան պնդում էին, ընտրանու իշխանությունը դա «ժողովրդավարության բաղկացուցիչն է», բայց «եթե չկա կառավարական ընտրանու նկատմամբ ոչ ընտրանու վերահսկողության որևիցե ձև, ապա քաղաքական համակարգը հագիվ թե կարելի է ժողովրդավարական անվանել: Մյուս կողմից, ոչ ընտրանին ունակ չէ ինքնուրույն կառավարել»¹:

Նոզնականության դպրոցի այլ ներկայացուցիչներ, ընդունելով, որ ժամանակակից արևմտյան հասարակությունը, եթե նույնիսկ ժողովրդավարության իդեալ չէ, ապա գոնե լիովին ենթարկված չէ որևիցե մեկ սոցիալական խմբի: Նոզնականության ուսմունքի հիմնարար հիփոթեզը, ըստ որի հա-

¹ *Алмонд Г., Верба С.* Гражданская культура и стабильность демократии. – «Полис», №4, 1992, с.123.

սարակությունը բազմազան իշխող կառույցների համակարգ է, առաջին անգամ համակարգային ձևով դիտարկել է Ա. Ռոուզը¹:

Էլիտիստներն ու պլյուրալիստները միասնական են այն բանում, որ առավել կարևոր քաղաքական որոշումներն ընդունում է սովորաբար մեծ նյութական ռեսուրսների տիրապետող, բավականին կայուն կազմ ու բարձր մասնագիտական մակարդակ ունեցող փոքր խումբը: Ամերիկյան քաղաքների քաղաքական կյանքի ուսումնասիրությունը (կառավարող ընտրանու համար մեծ նշանակություն կարող են ունենալ հենց տեղական, այլ ոչ թե դաշնային իշխանությունների գործողությունները) ցույց տվեց, որ ընտրանու տարբեր խմբեր միևնույն շահերը չեն կարող հետապնդել: Առարկելով էլիտիստներին՝ պլյուրալիստները ջանում են ապացուցել, որ միշտ չէ, որ ընտրանու ներկայացուցիչներն են քաղաքականություն «թելադրում». գոյություն ունեն հասարակական ուժեր, որոնք ընդունակ են նրանց հակազդել: Այսպես, օրինակ՝ շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված խնդիրները լուծելիս հսկա նավթային, քիմիական և մեքանաբանական ձեռնարկությունները ստիպված են հաշվի նստել անկախ բնապահպանական խմբերի հետ: Եթե ավանդական՝ մեծամասնական համակարգի համաձայն, ժողովրդավարությունը հիմնվում է պետության կառավարմանը քաղաքացիների համընդհանուր մասնակցության վրա, ապա պլյուրալիստների համար այս կամ այն հասարակության ժողովրդավարությունը կապված է դրանում քաղաքականության ոլորտում տեղեկացված փոքրամասնությունների մրցակցության հնարավորության հետ:

Պլյուրալիստական դպրոցի ամենահայտնի ներկայացուցիչ Ռ. Ա. Դալը պնդում է, որ քաղաքական իրավահավասարության բացակայությունը դեռ հասարակությունում կառավարող դասակարգի գոյության վկայություն չէ: Նոգնականությունը նույնպես, ըստ Դալի, ենթադրում է ոչ թե ժողովրդավարություն «մաքուր տեսքով», որի պայմաններում բոլոր քաղաքացիներն անմիջականորեն մասնակցում են որոշումների կայացման գործընթացում, այլ,

¹ *Rose A. M.* The Power Structure: Political Process in American Society. N.Y., 1967.

ավելի շուր, կազմակերպված խմբերի աշխատանքներում «անհատական մասնակցության» հնարավորություն: Այդպիսի խմբերի ազդեցիկությունը նա դիտարկում է հետևյալ չափանիշներով՝ Կրթական կազմակերպության գոյության երկարատևությունը, դրա անդամների քանակը, նրանց միջև համերաշխության մակարդակը: Նման խմբերում միավորվելով՝ քաղաքացիները հնարավորություն են ստանում ներազդել քաղաքական համակարգի վրա: Ընդ որում, հարաբերականորեն փոքր ազդեցություն ունեցող, բայց համախմբված կազմակերպությունները հաճախ ավելի մեծ արդյունքների են հասնում, քան հզոր, սակայն տարասեռ կազմով ընտրանիքները: Այս տեսանկյունից, խմբի շահերի միասնականությունը դառնում է նրա սոցիալական և քաղաքական հաջողության առավել նշանակալից գործոն¹:

Ներազայում Դալը, հետազոտելով «որոշումների կայացման» կառուցակարգը Կոնսերվատիվ նահանգի Նյու Ղեվեն քաղաքում, դիտարկել է քաղաքապետարանի երկու սպորաբաժանումների 16 որոշումները և վերլուծել երկու քաղաքական կուսակցություններից թեկնածուների մասին Կրթական կազմակերպության ընտրությունների ընթացքում: Ի հակակշիռ տեսանկյունից մակարդակում իշխանության բաշխումն ուսումնասիրած էլիտիստ Ղանթերին՝ Դալը նկարագրում է ամերիկյան քաղաքի քաղաքական համակարգը՝ հիմնվելով հասարակությունում իշխանության բազմակենտրոնության և ապակենտրոնացման գործոնների վրա: Ըստ գիտնականի դիտարկման, երբ գործը վերաբերում է հարցերի մի խմբին, ապա արտահայտվում է անձանց որոշակի խմբի ազդեցությունը, այլ հարցերում ակտիվանում են այլ ազդեցիկ խմբերը: Այսպես, Դալն ուշադրություն է դարձնում այն փաստի վրա, որ Նյու Ղեվենի քաղաքապետի իշխանական հզորությունը մշտական չէր և փոփոխվում էր՝ ելնելով որոշակի իրավիճակից: «Նա ոչ թե բուրգի գագաթն էր, այլ շահագրգիռ շրջանակի կենտրոնը: Նա հազվադեպ էր հրամաններ տալիս: Նա պայմանավորվում էր, խնդրում, կոչ անում մասնակցել, զմայլում, ճնշում, հղում ու մնջրեքում, սաստիկ, փոխգիծում առաջարկում, պնդում, խստորեն պահան-

¹ *Даль Р.* Демократия и ее критики / Пер. с англ. Под ред. М.В.Ильина. М., 2003, с.357-359.

ջում, սպառնում. նա մեծ կարիք ուներ մյուս լիդերների աջակցության, որոնք նույնպես չէին հրամայում: Նա չէր հրամայում, ավելի շուր՝ առևտուր էր անում»¹:

Այսպիսով, Էլիփիսուսները քաղաքական իշխանությունն ամենից հաճախ դիտարկում են որպես «սոցիալական կամ փնտրասական աշխարհում բարենպաստ դիրքի» արդյունք: Էլիփիսուսների պնդումներն այն մասին, թե փնտրասական ռեսուրսները վերահսկող անձինք անխուսափելիորեն նշանակալից դիրքեր են պահպանում քաղաքական իշխանության մեջ, քննադատության են ենթարկել պլյուրալիստները, որոնց համար իշխանությունը մեծապես կապված է փարբեր պաշտոնական ու ոչ պաշտոնական դաշինքների սոցիալական ակտիվության հետ: Պլյուրալիստները դեմ են երկու գործոնների՝ քաղաքական ազդեցության հնարավորության և իրական իշխանության փիրապելուման նույնականացմանը: Նրանց կարծիքով, «որոշման կայացման գործընթացի մասնակցի» որպիսությունը մեծապես կախված է նրանից, թե արդյոք այս կամ այն անձն օժտված է ավյալ հասարակությունում ընդունված որակներով: Դալը, քննադատելով «ընտրանուն պարկանելու թեստը», նշում է, որ հասարակությունում իրավասությունը երբեք չի գերակայում ազդեցիկության նկատմամբ: Նմանապես նա հիմք չի տեսնում պնդելու, որ ընտրանին *միշտ* միաձայն է և *միշտ* իր գաղափարներն է փաթաթում կամազուրկ զանգվածներին: Բանը նրանում է, որ միևնույն սոցիալական կարգավիճակ ունեցող, ոչ միայն փարբեր դասակարգերի կամ խմբերի, այլև մեկ սոցիալական շերտի լիդերներն ունեն փարբեր շահեր և, ինչպես փորձն է ցույց տալիս, դժվարությամբ են զուգամիտում իրենց դիրքորոշումները:

Էլիփիսուսները Դալին քննադատում են այն բանի համար, որ նա իր փնտրասական դրույթները հիմնում է միայն մեկ քաղաքական սուբյեկտի կամ դերակատարի հետազոտման վրա. դիտարկելով ոչ թե քաղաքական համակարգն ամբողջովին, այլ միայն առանձին ընդունված որոշումները (որոնցում

¹ Նույն փեղը, էջեր 42-443.

և միայն որոնցում, պլյուրալիստների կարծիքով, արտահայտվում է քաղաքական իշխանությունը), նա, ինչպես և փվյալ ուղղության բոլոր գիտնականները, նպատակ է դրել ոչ թե բացահայտել իշխանության բաշխման ընդհանուր պատկերը, այլ լուսաբանել միայն նրա բազմասկիզբ (պոլիարխիկ) բնույթը:

Թույլ փանք մեզ չհամաձայնել պլյուրալիստների որոշ այլ եզրակացություններին: Նախ՝ մեզ անհիմն է թվում նրանց պնդումն ընտրանու կազմակերպված խմբերի և լայն հասարակական մասնակցությամբ, բայց չկազմակերպված խմբերի հավասար հնարավորությունների մասին: Արժանի նշանակություն չտրվում փոփոխական հզորության գործոնին, հնարավոր չէ որոշել ո՛չ այս կամ այն սոցիալական խմբի միասնական շահը, ո՛չ էլ դրա առնչության աստիճանն իրական, և ոչ թե ձևական իշխանությանը: Նանրույթի պլյուրալիստական մոդելն ընդունում է փոքրամասնությունների մրցակցությունը քաղաքականության փոքրեր ոլորտներում: Այս ոլորտում համեմատական հեղափոխություններ իրականացրած Գ. Ալմոնդի և Ջ. Փատուլի կարծիքով, կառավարությունը, խթանելով այդ պայքարը, ստացված դրական արդյունքներն օգտագործում է իր քաղաքական գործունեության մեջ¹: Մակայն արդյո՞ք բոլոր կարևոր հարցերն է կառավարությունը քննարկում շահագրգիռ խմբերի հետ: Երկրորդ՝ պլյուրալիստները քաղաքական որոշումներ կայացնելիս բավականաչափ ուշադրություն չեն դարձնում ընդդիմադիր, բայց ռազմավարական դիրքորոշում զբաղեցնող անհատների դերին: Նրանց համար կարևոր է այն հանգամանքը, որ քանի դեռ բոլոր խմբերը ներունակ են որոշման կայացման գործընթացին մասնակցելու, գործընթացն ունի ժողովրդավարական բնույթ:

Ժամանակակից քաղաքական իրականությունում ընտրանու հոգնական փոփոխությունն ունի գործառնական բնույթ, որն էլ պայմանավորում է նրա յուրահարկությունները:

¹ *Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р.* Сравнительная политология сегодня: Мировой обзор. Пер. с англ. М.: Аспект Пресс, 2002

1. Քաղաքական ընտրանին միակը չէ. հասարակությունն իր բնականոն զարգացման համար պետք է ունենա ընտրանու տարաբնույթ խմբեր: Նասարակությունը ժողովրդավարական է իր ընտրանիների բազմազանությամբ. նրանցից յուրաքանչյուրն ունի իր գործառույթը, և նրանք չպետք է միմյանց **ն'չ թեքսզնահարեն, ն'չ գեքսզնահարեն, ն'չ էլ ոչնչացնեն:**

Ընտրանու հոգնականությունը պայմանավորված է աշխատանքի միջազգային բաժանման բարդությամբ, գլոբալ հասարակության սոցիալական կառուցվածքի բազմաստիճանությամբ, կենտրոն-ձայրամաս փոխհարաբերություններով: Յուրաքանչյուր էլիտար խումբ ունի իր ռազմավարական ընտրանին, որը, բացի իրենց շահերն արտահայտելուց, պարտավոր է նաև գաղափարներ գեներացնել:

2. Նասարակությունում բնական ընտրության գործառնությունն ապահովելու համար տարբեր էլիտար խմբերի միջև մրցակցություն է ծավալվում, որն ընթանում է բոլոր խավերի ընդունած, սահմանակարգված «քաղաքական խաղի ժողովրդավարական օրենքի» համաձայն: Նենց այս ամենի շնորհիվ էլ զանգվածները հնարավորություն են ստանում հսկողություն սահմանել ընտրանու նկատմամբ:

3. Ընտրանու և զանգվածների միջև հարաբերությունները պայմանական են, հաճախ էլ հարաբերական ու շիթային բնույթ ունեն: Նրանք քաղաքական պահի մեջ որոշակի խնդիրների լուծման արդյունք են: Ընդհանուր առմամբ, հարկապես ժամանակակից ժողովրդավարական երկրներում, իշխանության տարանջատմամբ պայմանավորված, զանգվածները կարողանում են ընտրանուց հաշվեքվություն պահանջել: Դրա շնորհիվ թուլանում է իշխանության կենտրոնացումը որոշակի սոցիալական խմբի ձեռքին, և կանխվում նրա սոցիալ-քաղաքական գերիշխանությունը: Ներկաբար՝ **էլիտար կարող են լինել նաև զանգվածներն իրենց բարձր գիտակցությամբ, քաղաքական ու քաղաքացիական մշակույթով, հիշողությամբ, քաղաքական խաղում իրենց արժեքաշահային հա-**

մակարդի փոխառությանը և, վերջապես, իրենց ազգային ինքնությանը:

4. Ժամանակակից իրավական, սոցիալական պետություններում քաղաքացին պետք է հնարավորություն ունենա հեշտությամբ հավաքագրվել ընտրանու կառուցվածքի մեջ, մասնակցել ընդունվող որոշման քննարկմանը և իր հետագա քաղաքական վարքաբանությամբ նպաստել նրա իրականացմանը:

5. Քաղաքականության հիմնական սուբյեկտը ոչ թե միայն սեփական շահերն արտահայտող, այլև **դարբեր խմբային շահեր փոխհամաձայնեցնող, համակեցության կանոններ պահպանող ընտրանին է:** Ընտրանու պետության այս դպրոցը հիմնված է հոգնական ժողովրդավարության և արժեքային համակարգի վրա: Ինչպես ամեն մի համակարգ, այն ևս ունի իր թերությունները՝ իդեալականացնում է զարգացած արդյունաբերական երկրների քաղաքական իրականությունը և ժողովրդավարությունը: Մինչդեռ այդ երկրներում կատարված սոցիոլոգիական վերլուծությունները վկայում են, որ նրանց հասարակական-քաղաքական կյանքի, հատկապես, հոգևոր ոլորտում, առկա են հակասություններ: Նախ, գերազնահատկապես զանգվածների նյութական պահանջները, քաղաքական խաղը վարվում է նյութապաշարական բովանդակությամբ՝ «զանգվածներին բարեկեցություն» պարտադիր կարգախոսով: Միաժամանակ անտեսվում են դարբեր սոցիալական խմբերի կողմից քաղաքական իրականության վրա ներագդելու հնարավորությունները: Այս գործոնների հաշվառմամբ էլ պլյուրալիստական դպրոցի արևարան Ս. Կելլերն առաջադրեց **«ազնավարական ընտրանի»** հասկացությունը, որի մտքերը, մշակված ծրագրերը և գործողությունները կառուցողական բովանդակություն ունեն հասարակության զարգացման համար: Ռազմավարական ընտրանու ներկայացուցիչները պարտավոր են սոցիալական կայունություն ապահովել և նվազագույնի հասցնել խմբային շահերով արտահայտված բախումները:

Ընտրանու տեսությունը համարվում է «ոչ ժողովրդավարական»: Սակայն նույնիսկ ընտրանու տեսության մաքիավելիստական և ազատական մտերեցումներին ընդդիմադիր՝ «քաղաքական հոգնականության» գաղափարախոսներն ընդունում են, որ ողջ բնակչությունը չի կարող մշտապես մասնակցել ամբողջ հասարակությանն առնչվող որոշումների կայացմանը, ուստի վերջինս իրականում կառավարվում է մարդկանց մի փոքր խմբի կողմից: Այնպես որ, այդ դպրոցներից յուրաքանչյուրը լրջորեն ճշգրտում է ժողովրդավարության մասին ավանդական պատկերացումը, ինչը պետք է հաշվի առնեն անցումային հասարակությունների (ևսև ՏՏ-ի) ժողովրդավարացման գործընթացները վերլուծող և գնահատող փորձագետները: Մինևույն ժամանակ նպատակահարմար չէ Նայաստանի նկատմամբ եվրոպական և, հատկապես, ամերիկյան գիտության մեջ գերիշխող՝ ժողովրդավարության մասին պատկերացումների մեխանիկական կիրառումը, քանզի քաղաքական կառավարման մեջ պետք է նախևառաջ առաջնորդվել ազգային իրողություններով՝ հաշվի առնելով հանրային և պետական կառավարման համաշխարհային փորձը: Ուստի անհրաժեշտ է ոչ միայն հետազոտել ընտրանու և զանգվածի փոխհարաբերությունները մեր երկրի ժողովրդավարական անցման հայեցակետով, այլև որոշել պետության ու ֆինանսական, արդյունաբերական, կուսակցական, անդրազգային և այլ կազմակերպությունների միջև ներկա պայմաններում ընդունելի և հնարավոր փոխգործակցության կառուցակարգերը: Իսկ այդ գործառույթը կարող է իրականացնել հոգնականության սկզբունքի հիման վրա հավաքագրված ռազմավարական ընտրանին, որը, համակարգելով տարբեր ոլորտների զարգացման միտումները, ի գործու է ռազմավարական զարգացման միասնական ուղի մշակել:

MARIAM MARGARYAN

*Head of the Chair of Political
Science of the PAA of the RA,
PhD of Philosophy*

PLURALISM IN THE STRUCTURE OF THE ELITE'S THEORY

The author considers the elite theory formation features. As the result of democratisation of relations between elite and masses, pluralism evolved in the structure of elite theory is demonstrated as a main political value.

In order to demonstrate the role of political elite, the following approaches are scrutinized in the article: *a) positional; b) functional; c) receptual; d) economic;* as well as *behaviourial* and *civilisational*. And it is by these reasons that the necessity of poliarchic elite is attributed such an important place.

ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Ռուս-հայկական (սլավոնական)
համալսարանի կիրառական
քաղաքագիտության ամբիոնի դասախոս*

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՏԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՇ ԺՈՂՈՎՐԻԱՎԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹՅՈՒՄ

Արդի պայմաններում տեղեկատվական-հաղորդակցական ոլորտի առաջընթացն արմատապես փոխակերպեց հասարակական հարաբերությունների զարգացման ավանդական հայեցակարգերը: Նոր տեղեկատվական-հաղորդակցական, ինչպես նաև տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը զգալիորեն բարձրացրեցին ոչ միայն ՋԼՄ-ների, այլև հասարակության քաղաքական համակարգի մյուս ինստիտուտների գործունեության արդյունավետությունը: Սակայն դրան զուգահեռ, անհրաժեշտ են նաև իրավական ընթացակարգեր ու տեխնիկապես հագեցած ենթակառուցվածքներ, որոնք հնարավոր կդարձնեն հիշյալ ոլորտի ինստիտուցիոնալացումը:

Արդի տեղեկատվական միջոցների **զանգվածային-համընդգրկունության չափորոշիչները** պահանջում են **համընդհանուր հասանելիություն**: Սակայն ժողովրդավարացման փուլում գրնվող կամ ոչ ժողովրդավարական երկրներում, որտեղ առկա են տեխնիկական միջոցների պակաս, անմարչելի հեռահաղորդակցություն, ծառայությունների բարձր սակագներ, աղքատություն, տղիություն և նմանատիպ այլ բացասական երևույթներ, բավականին դժվար է ապահովել տեղեկատվական միջոցների **զանգվածային գործունեությունը**: Այս համարներստում Մ. Կարա-Մուրզան, Յա. Զասուրսկին, Ե. Վարդանովան, Ի. Զասուրսկին, Ե. Պրոխորովը, Ա. Շևչենկոն, Լ. Գոլովանովը և ուրիշներ օգտագործում են «ազդեցության ամբողջականություն», «փոխակերպական ժողովրդավարական», «ճգնաժամա-

յին տեղեկարվական միջավայր», «տեղեկարվական տրամաբանություն» և այլ հասկացություններ¹:

Նասարակության քաղաքական ոլորտում հաղորդակցման համակարգն իրենից ներկայացնում է տեղեկարվական-հաղորդակցական գործունեություն իրականացնող բազմաթիվ տարրերի այնպիսի ամբողջություն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ տեղն ու դերը:

Քաղաքական հաղորդակցման բաղկացուցիչ տարրեր են հանդիսանում քաղաքական և ոչ քաղաքական սուբյեկտները, ՋԼՄ-ները, տեղեկարվական պրեզնտիվները, մշակույթը, գիտակցությունը, գաղափարախոսությունը, արժեքային կողմնորոշումները և այլն: Օրինակ՝ ըստ Վ. Ժուկովի, Ա. Կարպովի և Լ. Լարսի՝ «քաղաքական հաղորդակցական կառույցը կարող է ներկայացված լինել որպես ալիքների կամ ուղիների ցանց, որոնցով խմբում տեղի է ունենում տեղեկարվության և կարծիքների փոխանակում»²: Այդ ալիքների կամ ուղիների ամբողջությունն էլ ձևավորում է գլոբալ և լոկալ, փակ և բաց, ուղղահայաց և հորիզոնական, բազմակենտրոն և միակենտրոն հաղորդակցական կառույցը³:

Նկատի ունենալով հասարակության քաղաքական կյանքում ՋԼՄ-ների ունեցած նշանակությունը՝ որոշ վերլուծաբանների կարծիքով⁴ հենց

¹ Այդ մասին տե՛ս **С.Г. Кара-Мурза**. Манипуляция сознанием. М.,2004, էջ 276, **Я.Н. Засурский, Е.А. Варганова, И.И. Засурский** и др. Средства массовой информации постсоветской России. М.,2002, էջ 81-89, **Е.П. Прохоров**. Журналистика и демократия. М.,2001, էջ 24-62, **А.В. Шевченко**. Трансформационная журналистика в условиях развития информационного общества, // Информационная политика: Учебник (под. общ. ред. **В.Д. Попова**). М.,2003, էջ 173-186, **А.В. Голованов**. Свобода слова: философско-политологическое и правовое содержание, // Информационная политика: Учебник (под. общ. ред. **В.Д. Попова**). М.,2003, էջ 186-200 և նրիշներ:

² Политический менеджмент: Учеб. пособие (под. общ. ред. **В.М. Жукова, А.В. Карпова, А.Г. Латева**), էջ 512:

³ Այդ մասին տե՛ս նույն տեղում 508-509, 512:

⁴ Տե՛ս **W.Lippman**. Public Opinion. N.Y.,1965, **D. McQuail**. Mass Communication Theory. London,1987, **D.P. Philips**. The impact of mass media violence on U.S. homicides, // American Sociological Review, 1983, N 48, **W.L. Rivers, C.Mathews**. Ethics for the Media. Upper Saddle River. NJ.:Prentice Hall,1988, էջ 45-88,118-225, **D.Croteau, W.Noynes**. Media/Society: Industries, Images and Audiences. Pine Forge Press, 2000, էջ 16-31, **Д.В. Ольшанский**. Политико-психологический словарь. М.,Ек.,2002, էջ 471-474, **Г.В. Лазутина**. Журналистика и качество

նրանց է վերապահված քաղաքական հաղորդակցման իրականացման, կազմակերպման և կարգավորման գործընթացում գլխավոր դերակատարությունը: Այսպես, օրինակ՝ ըստ Վ. Բերեզինի ֆրանկֆուրտյան դպրոցի և կառուցվածքային ֆունկցիոնալիզմի կողմնակիցներն արդյունավետ քաղաքական հաղորդակցման իրականացման համար կարևորում են գոյություն ունեցող սոցիալական և քաղաքական կարգի պաշտպանության գործում ԶԼՄ-ների վճռորոշ դերը¹: Քանի որ քաղաքական հաղորդակցումը, ըստ Վ. Բերեզինի, «քաղաքական հարաբերությունների առանձնահատուկ տեսակ է, որի միջոցով դոմինանտ սուբյեկտները քաղաքականության մեջ կարգավորում են հասարակական-քաղաքական գաղափարների արարումն ու տարածումը»²:

ԶԼՄ-ների քաղաքական գործունեության առանձնահատկությունները պայմանավորված են նրանով, որ վերջիններս հանդես են գալիս և՛ զանգվածային նպատակները ձևավորող ինստիտուտ, և՛ դրանց իրականացման ընթացակարգ կամ ընթացակարգի անհրաժեշտ տարր: Այս առումով ԶԼՄ-ները հանդիսանում են նաև զանգվածային հաղորդակցման միջոցների իրականացման կարևորագույն եղանակը: Ինչպես նկատում է Գ. Լազուտինան, "медиа" և "масс-медиа" հասկացությունները հաճախ նույնիսկ օգտագործվում են որպես հոմանիշներ, ինչը նշանակում է, որ «աստիճանաբար հերազոտողների տեսադաշտից անտեսվում է այն փաստը, որ հասարակության մեջ զանգվածայինի կողքին գոյություն ունեն հաղորդակցման այլ տեսակներ»³:

Անկասկած, արդի տեղեկատվական շուկայում քաղաքական ռազմավարության և մարտավարության իրականացման կարևորագույն գործիք են

массовых информационных потоков: этический аспект, // Вестн. Моск. Ун-та. Сер.10. Журналистика, 2004, N 1, էջ 39-44 և որիչներ:

¹ Տե՛ս **В.М. Березин**. Политическая коммуникация в современных российских СМИ, // Вестн. Моск. Ун-та. Сер.10. Журналистика, 2003, N 1, էջ 104:

² **В.М. Березин**, նշվ. աշխ., էջ 104:

³ **Г.В. Лазутина**. Журналистика и качество массовых информационных потоков: этический аспект, // Вестн. Моск. Ун-та. Сер.10. Журналистика, 2004, N 1, էջ 33.

հանդիսանում ՋԼՄ-ները: Ներկայումս գանգվածային լրատվության բոլոր միջոցներն ու իրականացման ուղիները դարձել են հզոր քաղաքական կառուցակարգ և ինստիտուտ՝ ձեռք բերելով հանրային իշխանության անհրաժեշտ չափորոշիչներ: Այդպիսով դառնալով և՛ քաղաքական որոշումների ընդունման մեթոդ, և՛ քաղաքական թարերաբեմ, և՛ նախընտրական քարոզարշավների անցկացման, և՛ ընտրությունների կազմակերպման հիմնական գործիք:

Պարմականորեն ՋԼՄ-ները թափանցեցին քաղաքական շուկա, որպես կուսակցական քարոզչության տարածման հիմնական մարմիններ՝ հետզհետեւ ընդարձակելով իրենց լսարանը: Այդ գործընթացի զարգացմանը զուգընթաց, ՋԼՄ-ները ոչ միայն փորձում էին հաղորդակցվել մարդկանց հետ, հասարակական հեղինակություն ձեռք բերել, այլև՝ ապահովել *քաղաքական հաղորդակցման ընթացակարգը*: Այդպիսով իրականացնելով քաղաքական սոցիալականացման գործընթացն այնպես, որ քաղաքացիները դառնան համաքաղաքական գործընթացների մասնակիցներ, ինչպես նաև գիտակցեն իրենց տեղն ու դերը ներպետական և միջազգային քաղաքականության իրականացման գործում:

Ընդհանուր առմամբ Ն. Դ. Լասուելի կարծիքով, ՋԼՄ-ների գործունեությունը նպատակ ունի բնակչությանը քաղաքականորեն լուսավորել, որպեսզի նրանք գիտակցեն իրենց հետաքրքրությունները և շահերը քաղաքականության ոլորտում¹: Ըստ Լասուելի՝ «massmedia»-ն հրապարակայնորեն առաջինն ազդարարեց հասարակության լայն գանգվածներին տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ հիմնահարցերի մասին²: Դրանով իսկ մարդկանց իրազեկելով, որ անհրաժեշտ է պետական իշխանության մարմիններից ու կուսակցություններից համապատասխան հաշվեկրթություն-

¹ Տե՛ս H.D. Lasswell. Mass Communication. Urbana, 1960:

² Տե՛ս նույն տեղը:

ներ պահանջել **նախապես ծրագրված գործողությունների իրականացման համար:**

Բնականաբար քաղաքական հաղորդակցման յուրաքանչյուր փուլի և բաղկացուցիչ փուլերի առանձնահատկությամբ պայմանավորված փուլի է ունենում *հաղորդակցման գործընթացը*: Քաղաքական որոշումների ընդունման գործընթացում մասնակացություն ունեցող բազմազան քաղաքականության սուբյեկտները փարբեր մեթոդներով են փորձում ազդել կամ չազդել: Այդ ամենը նույնանման ձևով դրսևորվում է նաև քաղաքական փոփոխության սրացման, ընկալման և փարածման գործընթացներում: Կախված այն բանից, թե ինչն է կազմում քաղաքական հաղորդակցման գործընթացի իրականացման դրդապարճառներն ու նպատակները: Նրանց հիմքում կարող են լինել ոչ միայն ներանձնային, միջանձնային, ներխմբային, միջխմբային և զանգվածային, այլև մշակութային, ավանդական, արժեքային, գլոբալ, ազգային ու այլ գործոններ: Տեղին է նշել, որ բոլոր վերոհիշյալ գործոնները միայն հարաբերականորեն են միմյանցից անկախ, և դրանցից յուրաքանչյուրն ակնհայտորեն կամ քողարկված ձևով պայմանավորում են մեկը մյուսին: Այսպես, օրինակ՝ Ա. Սադոխինի խմբագրությամբ հրատարակված «Միջմշակութային հաղորդակցման հիմունքները» դասագրքում կարևորելով հաղորդակցման գործընթացում անձնական շահերը՝ նշվում է, որ «մարդը գործում է մշակութային արժեքներին ու նորմերին համապատասխան, որոշակի սոցիալական դերեր խաղում և ընդունակ դառնում մյուս մարդկանց հետ շար կամ քիչ չափով շփվելու»¹: Այնուհետև մարդու անձնական հաղորդակցական գործոնների շարքում ընդգծելով շփվողականությունը, կապի մեջ մտնելը, հարմարվողականությունը, ինքնարիթմապետությունը, ինքնազիտակցությունը, ընկալման ընդունակությունը, շփման ոճը և այլն²:

¹ Տե՛ս Գ.Տ. Գրուշևիցկայա, Վ.Դ. Սոփոկով, Ա.Ս. Տադոխին. ՕՏՈՎՈՎ ՄԵՋԿՍՒԼՏՄՐՆՈՎՈՅ ԿՈՄՄՈՆԻԿԱԿԻՅՈՒՆ: ՍՈՎԵՔ. ԴՅԱ ՎՅՈՎՈՎ (ՍՈՎ ՐԵԴ. Ա.Ս. Տադոխին), էջ 98-103:

² Տե՛ս նույն փուլում, էջ 127-131:

Յուրաքանչյուր քաղաքական հաղորդակցում իրենից ներկայացնում է քաղաքականության սուբյեկտների միջև տեղեկատվության փոխանակում, որը, սակայն ենթադրում է նաև որոշակի գործողությունների համալիր, որոնք էլ կազմում են **քաղաքական հաղորդակցման լեզվի** ինքնատիպ դրսևորումները:

Ժողովրդավարացման պայմաններում գրավող ՁԼՄ-ների համակարգը, որտեղ առկա են հասարակական կարծիքի և ազատ խոսքի ձևավորման բազմաթիվ ընթացակարգեր, նույնպես փորձում են հրապարակային դարձնել հասարակական կյանքը: Տեղեկատվական-հաղորդակցական դաշտն աստիճանաբար ինստիտուցիոնալացվում է շնորհիվ հասարակական կյանքում ակտիվ ներգրավվածություն ունեցող քաղաքականության սուբյեկտների:

Արդի Նայաստանում զարգանում են զանգվածային քաղաքական հաղորդակցման կազմակերպման բազմաթիվ հաստատություններ, որոնցից են հեռուստատաղիորենկերությունները, ինտերնետային ծառայությունները, թերթերը, ամսագրերը և տեղեկատվության այլ միջոցները:

Ժամանակակից գլոբալացման գործընթացները, որոնցից չեն կարող անմասն մնալ նաև հայկական տեղեկատվական հաղորդակցման միջոցները, ընդլայնելով իրենց հաղորդակցման տարածությունը, նոր հիմնախնդիրներ են առաջադրում զանգվածային տեղեկատվական տեխնոլոգիաներին: Այս առումով կարևոր նշանակություն ունեն նաև *Նեոսահաղորդակցության միջազգային միության* (ՆՄՄ) և *Էլեկտրոնային միջազգային միության* (ԷՄՄ) գործունեությունը, որոնց հետ ակտիվորեն համագործակցում է Նայաստանը:

Ցանկացած երկրում, անկախ վերջինիս քաղաքական համակարգի ու վարչակարգի տիպից, ՁԼՄ-ներն ունեն վճռորոշ դերակատարություն: Եթե ժողովրդավարական պետություններում ՁԼՄ-ները հնարավորություն են տալիս մարդկանց և նրանց միավորումներին հրապարակայնորեն քննարկելու ու մասնակցելու հասարակական հնչեղություն ունեցող քաղաքական որոշումների ընդունմանը, ապա ավտորիտար և տոտալիտար պետություն-

ներում այդ ամենը վարչակարգի ցանկությամբ իրականացնում են միայն «ցանկալի» հաստատությունները:

Նամաշխարհային և ազգային տեղեկատվական տարածության մեջ իրականացվող քաղաքականությունն իր դրական և բացասական ազդեցությունն է ունենում քաղաքական համակարգերի ժողովրդավարացման, քաղաքացիական սոցիալականացման ու մասնակցության, պետական իշխանության լեգիտիմության բարձրացման վրա: Բնականաբար, ցանկացած երկրում դրանք մեծապես պայմանավորված են ԶԼՄ-ների զարգացման ազգային ավանդույթներով ու օրինաչափություններով: Օրինակ՝ 1998 թ.-ի սեպտեմբերի 30-ի տվյալներով ամերիկյան թերթերից «Ուոլ սթրիթ ջուրնալի» տպաքանակը կազմել է 1 740 450, «Յու.Էս.Էյ-թուդեյի»՝ 1 653 428, «Լոս Անջելես թայմսին»՝ 1 067 540, «Նյու Յորք թայմսին»՝ 1 066 658, իսկ «Վաշինգտոն փոստին»՝ 759 122¹:

Նամենապրության կարգով նշենք, որ միայն 1998 թ.-ի փետրվարի 1-ի դրությամբ «ԱՄՆ-ում հրատարակվել է 1509 օրաթերթ՝ 56,7 մլն օրինակ տպաքանակով», իսկ «տարեկերօրին 1500 թերթերի տպաքանակը կրճատվել է մինչև 56 մլն օրինակ տպաքանակով»²: Ըստ *ԱՄՆ-ի տպաքանակի հաշվառման ընդհանուր հարցումի* 1999 թ.-ի սեպտեմբերի 30-ի տվյալների՝ «օրաթերթերի տպաքանակը 6-ամյա ժամանակահատվածում՝ 1998 թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կրճատվել է 0,5 %-ով»³: Իսկ, ըստ *Ամերիկյան թերթերի ընկերակցության* 2000 թվի տվյալների՝ տեղի ունեցավ 0,2 %-ի չափով որոշակի աճ և «օրաթերթերի ընդհանուր տպաքանակը կրկին գերազանցեց 56 մլն օրինակը»⁴:

¹ Տե՛ս Գ.Ա. Գолованова. Пресса США в 1998 году, // Вестн. Моск. Ун-та. Сер.10. Журналистика, 1999, N 5, էջ 39:

² Գ.Ա. Գолованова, նշվ. աշխ., էջ 40:

³ Գ.Ա. Գолованова. Пресса США , // Вестн. Моск. Ун-та. Сер.10. Журналистика, 2000, N 5, 59.

⁴ Բ.И. Любимов. Пресса США , // Вестн. Моск. Ун-та. Сер.10. Журналистика, 2001, N 5, էջ 57.

2001 թ.-ի սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո էական թեմատիկ փոփոխություններ կրեց ամերիկյան մամուլը, որոնք, ինչպես նշում են մի շարք պեսարաններ, ամերիկյան տեղեկատվական հաղորդակցման գարգացման արդի պարամոթյունը բաժանեցին երկու ժամանակաշրջանի: Օրինակ՝ ըստ Գ. Գոլովանովայի՝ տեղի ունեցավ «քարոզչություն», հասկացության դրական առումով վերաիմաստավորում, իսկ մամուլում նոր թափ ստացան քարոզչական ու հոգեբանական բնույթի պատերազմների մասին գաղափարները¹:

Ֆրանսիական «*Կուրա*» թերթի հրատարակած տվյալներով՝ 1999 թ.-ի սկզբներին ֆրանսիական մամուլն ուներ 2940 անուն, որոնցից միայն 88-ն օրաթերթ էր, իսկ 576-ը՝ շաբաթաթերթ²: Եթե 1999 թ.-ին ըստ ընթերցողների լսարանի առկայության՝ առաջին տեղում է գտնվում «Էկիպը», երկրորդում՝ «Ուեստ ֆրանսը», իսկ երրորդում՝ «Մոնդը», ապա, ըստ տպագրանակի, առաջադար դիրքերում են գտնվում «Մոնդը» (390 840 օրինակ), «Էկիպը» (386 189 օրինակ) և «Ֆիգարոն» (366 690 օրինակ)³:

ԶԼՄ-ները քաղաքական գործընթացներում հանդես են գալիս այնպիսի կոմունիկատորներ, որոնք կախված քաղաքական հաղորդակցման մյուս սուբյեկտների ակտիվությունից՝ կարող են մասամբ կամ ամբողջովին իրականացնել տեղեկատվական-հաղորդակցական գործունեություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև քաղաքականություն:

Քաղաքականության մեջ գոյություն ունեն հաղորդակցման և տեղեկատվության իրականացման բազմաթիվ եղանակներ, որոնք հասկանալի պատճառներով չեն սահմանափակվում միայն *զանգվածային տեխնոլոգիաներով*: Նրանցից յուրաքանչյուրի ընտրությունը պայմանավորված է

¹ Տե՛ս Գ.Ա. Գолованова. Пресса США , // Вестн. Моск. Ун-та. Сер.10. Журналистика, 2002, N 5, էջ 26:

² Տե՛ս Ա.Վ. Шарончикова, Ю.В. Тихонова, Ю.Ю. Соломонов. Средства массовой информации Франции в 1998 году, // Вестн. Моск. Ун-та. Сер.10. Журналистика, 1999, N 5, էջ 52:

³ Տե՛ս Ա.Վ. Шарончикова. СМИ Франции, // Вестн. Моск. Ун-та. Сер.10. Журналистика, 2000, N 5, էջ 84-85:

պեղեկավարական-հաղորդակցական դաշտում կոմունիկատորների ունեցած սահմանադրաիրավական, քաղաքական և այլ կարգավիճակներով: Այսպես, օրինակ ըստ Ա. Սոլովյովի՝ «քաղաքականության մեջ գոյություն ունեն հաղորդակցման երեք հիմնական եղանակներ... հասարակական-քաղաքական ինստիտուտների, ՋԼՄ-ների և մարդկանց ոչ ֆորմալ շփումների միջոցով»¹:

Նայաստանն անդամակցում է Միավորված ազգերի կազմակերպությանը (ՄԱԿ), Եվրախորհրդին (ԵԽ) ու Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությանը (ԵԱՏԿ), ինչպես նաև Գործընկերության մասին համաձայնագիր է կնքել Եվրոպական Միության (ԵՄ) հետ՝ այդպիսով սրանձնելով մի շարք պարավորություններ նաև ՋԼՄ-ների իրավունքների պաշտպանության ոլորտում: Այդ իրավունքների պաշտպանության ընթացակարգերն ամրագրված են ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (1948), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (1966), ԵԽ-ի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (1950), ԵԱՏԿ/ԵԱՏԿ-ի՝ Եզրափակիչ ակտում (1975), Մարդկային չափանիշի խորհրդածողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթում (1990), Փարիզի հռչակագրում Նոր Եվրոպայի համար (1990), Մարդկային չափանիշի խորհրդածողովի Մոսկվայի խորհրդակցության փաստաթղթում (1991), Նևսիմկիի բարձր մակարդակի հանդիպման հռչակագրում (1992) և միջազգային իրավական ու քաղաքական այլ փաստաթղթերում²: Մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու հավատի ազատության իրավունք, իսկ 19-րդ հոդվածում՝ յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք

¹ Политические коммуникации: Учеб. пособие для студентов вузов (под ред. А.И. Соловьева). М., 2004, էջ 70-71.

² Տե՛ս Մարդու իրավունքները և դատավարությունը. միջազգային փաստաթղթերի ժողովածու, Եր., 1996:

անկաշկանդ արքահայերևու իրավունք: Այդ իրավունքը պաշտպանված է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (հոդված 18, 19), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (հոդված 9, 10), Եզրափակիչ ակտով (կետ 2) և իրավական այլ ակտերով ու փաստաթղթերով:

Նայաստանում 2004-ի հունվարի 1-ի դրությամբ ՆՏ արդարադատության նախարարությունում գրանցված է 1326 լրարվության միջոց¹: Սակայն պետք է նշել, որ դրանցից գերակշիռ մասի գործունեությունն իրականացվում է Երևան քաղաքում և դրանցից շատ քչերն են, որ մարզերում ու գյուղերում իրականացնում են տեղեկատվական-հաղորդակցական գործունեություն: Նամենատության կարգով նշենք, որ եթե ընդհանուր առմամբ Նայաստանում գործում է 42 հեռուստաընկերություն և 15 ռադիոընկերություն, որից Երևան քաղաքում՝ 21 հեռուստաընկերություն ու 12 ռադիոընկերություն, ապա մարզային ու գյուղական բնակավայրերում դրանց թիվը փափաքանքով է 1-ից մինչև 4-ի²: Ընդ որում, ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ մարզերի գերակշիռ մասում գերակայող են «Նայաստանի հանրային հեռուստաընկերությունը» ու «Նայաստանի հանրային ռադիոընկերությունը» և «Նայակական երկրորդ հեռուստաալիքը»: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ Նանրային հեռուստառադիոընկերությունը, «Նեռուստատեսության և ռադիոյի մասին» ՆՏ օրենքի (2000) համաձայն, սրեղծվում է պետության կողմից և հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է (հոդված 28), ապա սրացվում է, որ առավելապես գործ ունենք համընդգրկուն պետական տեղեկատվաքաղաքականության հետ: Ի դեպ ավելացնենք նաև, որ հիշյալ ոլորտում գործում են նաև «Նեռահաղորդակցության հանրապետական

¹ Սույն տեղեկությունը պաշտոնապես սրացվել է 08.09.2004 թ.-ին (N 3-2/1394) ՆՏ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության կողմից, որը փրամադրվել է հեղինակի կողմից ներկայացված դիմումի համաձայն:

² Սույն տեղեկությունը պաշտոնապես սրացվել է 16.02.2005 թ.-ին (N 02-11/533) ՆՏ արդարադատության նախարարի առաջին տեղակալի կողմից, որը փրամադրվել է հեղինակի կողմից ներկայացված դիմումի համաձայն:

կենտրոն», «Նայաստանի հեռուստատեսային ցանց», «Ռատիո» և այլ փակ բաժնետիրական ընկերություններ, որոնք հիմնադրվել ու ղեկավարվում են ՆՏ տրանսպորտի և կապի նախարարության կողմից¹:

Ինչ վերաբերվում է փազազիր մամուլին, ապա դարելով դրանց փազաբանակից և առկա հեռահաղորդակցության այլ միջոցների սպասարկման ծառայությունների որակից ու հաճախականությունից՝ կարող ենք արձանագրել վերջիններիս արդեն կարգավորված-հաղորդակցական անհասանելիությունը, փարաձական սահմանափակվածությունն ու անհավասարաչափ բաշխվածությունը: Փաստորեն, սրացվում է ոչ զանգվածային լրատվության միջոցներ, կամ այլ կերպ ասած, որքանով են զանգվածային հենց ՋԼՄ-ները:

Նայաստանում ՋԼՄ-ների արդեն կարգավորված-հաղորդակցական գործունեության նորմատիվային հենքն են կազմում ՆՏ Սահմանադրությանը, ՆՏ քաղաքացիական օրենսգրքը, «Լեզվի մասին», «Նեոսահաղորդակցության մասին», «Նեոլինակային և հարակից իրավունքների մասին», «Գովազդի մասին», «Նեոստատեսության և ռադիոյի մասին», «Լիցենզավորման մասին», «Զանգվածային լրատվության մասին» ու «Տեղեկատվության ազատության մասին» ՆՏ օրենքները և ներպետական ու միջազգային այլ իրավական ակտերը²:

ՆՏ Սահմանադրության 24-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ արդեն կոնկրետներ ու գաղափարներ փնտրելու, սրանալու, փարածելու ազատությունը արդեն կարգավորված ցանկացած միջոցով...³: Ինչպես ՆՏ Սահմանադրությամբ, այնպես էլ ՋԼՄ-ների ոլորտը կարգավորող գործող օրենսդրությամբ պաշտպանված են խոսքի ազատության իրավունքը, որը ներառում է մտքի, խղճի ազատության, կարծիքները պնդելու և համոզմունքներն արտահայտելու ա-

¹ Այդ մասին փնտրելով ՆՏ տրանսպորտի և կապի նախարարության ինֆորմացիային կայքում՝ www.mtc.am :

² Այդ մասին փնտրելով ՆՏ Ազգային ժողովի ինֆորմացիային կայքում՝ www.parliament.am:

³ Նայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Եր., 1997, էջ 9:

զարության, գրական, գեղարվեստական, գիտական սրելծագործության ազարության և մի շարք այլ¹ ազարությունների իրավունքը: Առանց ՁԼՄ--ների ազարության անհնար է ձևավորել հասարակական կարծիք և ապահովել համարժեք րեղեկարվություն սրանալու, մշակելու, հավաքելու ու րարածելու գործընթացը: *Տաղորդակցման իրավունքն ու ազարությունը* ենթադրում են, որ այդ իրավունքով ու «ազարությամբ պեքք է օժրված լինեն բոլոր այն միջոցները, որոնցով կարող են արրահարվել, րարածել խոսքը, գաղափարները, գաղափարախոսական ուսմունքները և առհասարակ ցանկացած րեղեկարվություն»²: Այսպես, օրինակ՝ «Նռոսրարեսության և ռաղիոյի մասին» (հողված 4) և «Ձանգվածային լրարվության մասին» (2003, հողված 4) ՏՏ օրենքների համաձայն՝ Տայասրանում երաշխավորվում է լրարվության ոլորրում հեռոսրառաղիոհաղորդումների ու խոսքի ազարության իրավունքը և արգելվում է գրաքննությունը: Իսկ «Տեղեկարվության ազարության մասին» ՏՏ օրենքի (2003) համաձայն՝ րեղեկարվության ազարությունը կարող է սահմանափակվել Տայասրանի Տանրապեարության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված դեպքերում (հողված 6):

Տայասրանում րեղեկարվական-հաղորդակցական ոլորրի իրավակարգի սկզբունքներն ամրագրված են նաև «ՏՏ հեռահաղորդակցության բնագավառում գործունեության լիցենզավորման կարգերով», որոնք գործող օրենսդրության համաձայն՝ հասրարված են ՏՏ կառավարության կողմից³: Այսպես, օրինակ՝ ՏՏ կառավարության 1999 թ.-ի նոյեմբերի 20-ի (N 694) որոշմամբ հասրարված է «Տայասրանի Տանրապեարությունում ռաղիոհաճախությունների րիրոյթի բաշխման և օգրագործման, ռաղիոլեկրոնային միջոցների ու բարձր հաճախության սարքավորումների ձեռքբերման, ներմուծման ու շահագործման, ինչպես նաև դրանց արրադրության դեպ

¹ Վ.Վ. Պողոսյան, Մարդու իրավունքներ, Եր., 2002, էջ 43:

² Նույն րեղր:

³ Այդ մասին րենս ՏՏ րրանսպորրի և կապի նախարարության ինրերեներային կայքում՝ www.mtc.am :

քում մշակման, նախագծման ու արտադրության պայմանները», իսկ ՏՏ կառավարության 2003 թ.-ի հունվարի 9-ի (N 173-Ն) որոշմամբ հաստատված հավելվածի համաձայն՝ «Նեոսահաղորդակցության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ «Լիցենզավորման մասին» ՏՏ օրենքով նախատեսված փորձաքննությունների իրականացման կարգը»¹:

Վերոհիշյալ առումով կարևոր նշանակություն ունի նաև վերջերս շրջանառության մեջ դրված «Տեղեկատվայնացման, տեղեկության և տեղեկատվության պաշտպանության մասին» ՏՏ օրենքի նախագիծը, որով պետք է կարգավորվեն տեղեկատվայնացման սուբյեկտների փոխհարաբերությունները և սահմանվեն տեղեկատվական համակարգերի գործառնության ու տեղեկատվության պաշտպանության իրավական հիմքերը (հոդված 1)²:

¹ Այդ մասին տե՛ս նույն տեղը:

² Այդ մասին տե՛ս նույն տեղը:


GRIGOR PETROSYAN

*Russian-Armenian (Slavic) University, Chair
of Applied Political Science, Lecturer*

**CHARACTERISTIC FEATURES OF ACTIVITY OF MASS
MEDIA IN THE PROCESS OF DEMOCRATIZATION
OF THE RA**

In contemporary conditions the progress of informational-communicative sphere used to transform traditional concepts of social relations development. The uses of new informational-communicative, as well as informational-telecommunication technologies have increased the efficiency of activity of not only Mass Media, but also of other institutions of the political system of the society. Being a specific instrument of political communications, Mass Media participate interactively in all political processes and decisions, thus challenging traditional institutions and technologies. The Constitution of the RA accepts the right for information and bring the legislature of Armenia into the international legal system. As Armenia is a member of the UNO, the Council of Europe, ECSC and has a number of commitments under the European Union, the legislative foundation of the RA together with the state one, comprises also other mechanisms of protection of the rights of mass information and the right of citizens for information.

ՕԳՏԱԿԱՐ ԴԱՍԱԳԻՐՔ



«Պեպրական ծառայություն» հրատարակչությունը լույս է ընծայել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Շ. Նարությունյանի «Նայասարանի Նանրապետության մունիցիպալ իրավունք» (Երևան, 2004, 359 էջ) դասագիրքը:

Այն երկրորդ հրատարակչությունն է՝ լրացումներով և փոփոխություններով, համակողմանի և ամբողջական ուսումնասիրություն, ուր մունիցիպալ իրավունքի հիմնախնդիրները դիտարկվում են միջազգային և ազգային իրավական ակտերի վերլուծությամբ, պարամիրավական ու իրավահամեմա-

րական մեթոդների պատշաճ օգտագործմամբ:

Աշխատության ձեռքբերումներից է նաև հեղինակի ուրույն մեթոդաբանական մտքեցումը, որպեսզ գուցողված են ակադեմիական գիտական հետազոտությանը և ուսումնական-դասագրքային առանձնահատկությունները, որոնց շնորհիվ մունիցիպալ իրավունքի հիմնահարցերն ուսումնասիրված են համակողմանի և պահանջովող գիտական մակարդակով:

Դասագիրքն առանձնանում է հիմնախնդիրների վերլուծության խորությամբ, մշակված եզրակացությունների և հերկությունների հիմնավորվածությամբ ու գիտականությամբ: Գրքում համակողմանիորեն լուսարանվում են հայոց պետականության զարգացման ներկա ժամանակաշրջանում փարածքային կառավարման իրավունքի հասկացությունը և դրա գործնական-կիրառական նշանակությունը:


Գրախոսվող ուսումնական դասագիրքն արժեքավոր է նաև գերեղված անհրաժեշտ միջազգային և ազգային իրավական ակտերի հողվածներով, որոնք առավել ամբողջական ու ավարտուն են դարձնում աշխատանքը: Այս հանգամանքն ուսանողությանը և ընթերցող լայն հասարակությանը հնարավորություն է ընձեռում խնդրո առարկայի ուսումնասիրության շրջանակներում խորությամբ փիրապետելու անհրաժեշտ նորմարիվ նյութերին:

Որպես դասագիրք՝ այն շարադրված է իրավաբանական բուհերում դասավանդվող «Նայասարանի Նանրապետության մունիցիպալ իրավունք» առարկայի ծրագրին համապարասխան և գրված է մարչելի լեզվով ու ոճով: Այս առումով դասագիրքը, առաջին հերթին, նախարեաված է իրավաբանական բուհերի և ֆակուլտետների, ՏՏ պետական կառավարման ակադեմիայի ուսանողների, ասպիրանտների և դասախոսների համար:

Դասագիրքն օգտակար կարող է լինել նաև փարածքային կառավարման և մունիցիպալ մարմիններում աշխատողներին:

Վահն Սյրեփանյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերջերս լույս է տեսել ՆՏ պետական կառավարման սկադեմիայի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Շ. Նարոթյունյանի ծավալուն՝ «Եվրոպական Միություն» մենագրությունը (Երևան, 2005թ. 619 էջ):

Գրախոսվող աշխատությունը, ըստ էության, մնգանում առաջին համակողմանի և ամփոփ հետազոտությունն է, որտեղ հեղինակը պարզաճ գիտական մակարդակով ուսումնասիրել է արևմտավերոպական երկրների ինտեգրման հիմնահարցերը, լուսաբանել է Եվրոպական Միության ձևավորման գործընթացը, վերլուծել է Եվրոպական համայնքների և Եվրոպական Միության իրավական հիմքերը, մարդու և քաղաքացու իրավական վիճակի հիմունքները Եվրոպական Միությունում, ինչպես նաև հանրային ծառայության իրավական կարգավորման հետ կապված հիմնախնդիրները:

Աշխատությունը հնարավորություն է տալիս դիտարկել Եվրոպական Միության պարմական զարգացման հիմնական ուղենիշերը, արդի դարաշրջանում ինտեգրման հետագա խորացման միտումները և դրանում առկա հակասությունները:

Գրախոսվող աշխատության հիմնական արժանիքներից է նաև օգտագործված աղբյուրագիտական հենքը: Նեղիսակին հաջողվել է հետազոտության մեջ ընդգրկել ուսումնասիրված հիմնահարցերի վերաբերյալ հսկայածավալ պարմաքաղաքական փաստաթղթեր, նորմատիվ նյութեր և հարուստ մասնագիտական գրականություն: Նեղիսակի դատողությունները և հետևությունները փաստարկված և հիմնավորված են վերոնշված նյութերի բազմակողմանի և խորքային քննական վերլուծության վրա, ինչն աշխատանքը դարձնում է առավել կարարյալ, ամբողջական և ավարտուն:

Վերոնշվածով է պայմանավորված գրախոսվող աշխատության ճանաչողական, գիտարեսական և գործնական-կիրառական նշանակությունը:

Աշխատությունն օգտակար կլինի եվրոպական իրավունքի և եվրոպական ինտեգրման հիմնահարցերով զբաղվող ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի, պետական ծառայողների և ընթերցող լայն հասարակության համար:

Գառնիկ Սաֆարյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

«Նանրային կառավարում» գիրական հանդեսն իր էջերում հրապարակում է գիրական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՆՏ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները:

Խմբագրությանն ուղարկված հոդվածները չեն վերադարձվում, հանդեսի պայմաններին չհամապատասխանող նյութերը չեն ընդունվում: «Նանրային կառավարում» հանդեսի հրապարակումներում ներկայացված մտերցումներն արտահայտում են հեղինակների տեսակետը:

Նոդվածների ներկայացման ձևը

1. Նոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, քաղաքի (1 օրինակ) և համակարգչային շարվածքով կրիչով (*MS WORD* ծրագրով), հայերենը՝ «Arial Armenian», ռուսերենը՝ «Times New Roman» (*Unicode*) և անգլերենը՝ «Times New Roman» փառապեսակներով, 11 փառաչափով (*Font*): Պարպաղիք է «և» փառի օգտագործումը: Բացակը (*space, пробел*) համարվում է առանձին նիշ: Բառերը փարանջարել միայն մեկ բացակով:

2. Էջը պետք է համապատասխանի A5 (*Width 14.8 cm, Height 21 cm*) չափին, ունենա լուսանցքներ՝ ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Էջերը պետք է համարակալված լինեն էջի ներքևում կենտրոնում: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Ձևագիրը պետք է ունենա կողմնորոշում էջի աջ և ձախ եզրերից (*Justify*):

3. Նոդվածն սկսվում է վերնագրով առաջին բողի կենտրոնում՝ մեծատառերով, որին հետևում է հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը, պաշտոնը և կոչումը: Նոդվածի վերջում ներկայացվում է ամփոփագիրն անգլերեն լեզվով՝ ոչ ավելի, քան 0.5 էջ ծավալով (անգլերեն լեզվով ներկայացված հոդվածների ամփոփագիրը պետք է լինի ռուսերենով): Նոդվածի ընդհանուր ծավալը՝ ոչ ավելի, քան 20 էջ:

4. Նոդվածը պետք է ձևակերպված լինի հստակ, վերջում պետք է տրվի գրականության ցանկը: Նոդվածը եզրափակվում է հեղինակ(ներ)ի ստորագրությամբ (ձախից) և աջից նյութը խմբագրության հանձնելու թվականը [օրինակ՝ 15/04/2005 թ.-ին]:

5. Նկարները, գրաֆիկները և այլ վիզուալ նյութերը ներկայացվում են էլեկտրոնային տեսքով՝ առանձին ֆայլով կամ ներմուծված հոդվածի մեջ *WORD* ծրագրում իբրև նկարներ (*paste special/as picture*) և առանձին *EXCEL* ֆայլով (գրաֆիկների, դիագրամաների և այլ դեպքերում): Մինևույն նյութի ներկայացումն աղյուսակի և նկարի ձևով չի թույլատրվում: Նոդվածում նկարների հղումները բերվում են հստակումով [օրինակ՝ «(տե՛ս նկ. 8)» կամ «ինչպես հետևում է նկ. 4-ից»:

6. Ընդունված խորհրդանշանների (% , \$) օգտագործումն անհրաժեշտ է: Թվականային հասպատումները բերվում են բացակով և կետով [օրինակ՝ «1824 թ. պայմանագրով» կամ «1980-2000 թթ. ընթացքում»]:

7. Նոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ «էջ» (հայերեն), с. (ռուսերեն), р. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ), օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Նոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 փառաչափով, բնագրի լեզվով: Նաջորդաբար նշվում են կարգային համարը (առանց քառակուսի փակագծերի), հեղինակների ազգանուններն ու անվանադասերը՝ **մզացված (Bold)** և *շեղ (Italic)*, հրատարակության վերնագիրը, հրատարակչության անունը, վայրը (քաղաքը), թվականը, նաև էջ(եր)ը, եթե հղված աղբյուրը միայն մեկ անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Պարբերական հրատարակությունների համար հեղինակի անվան և ազգանվան ու հրատարակման վերնագրին հաջորդում են պարբերականի անվանումն առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի հ/կամ թողարկման համարները, վայրը, հերթական համարը և էջ(եր)ը: Էլեկտրոնային աղբյուրների դեպքում վերնագիրը (եթե կա), web-հասցեն ամբողջությամբ և անսաթիվը, ամիսը, փարին: Օրինակ՝

Աղբյուրներ և գրականություն

1. **Տարությունյան Ա.**, Եվրոպական Միության հանրային ծառայությունը, «Նանրային կառավարում», 2004 թ., թիվ 3-4, էջ 4:
2. **Шаранова Р.**, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира. "Наука", М, 1986. с. 105.
3. **Yasha Lange.** Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
4. <http://www.oecd.org/dsti/sti>, March 1, 2001.

8. Ենթատողային մեկնաբանությունները կամ հավելումները (footnotes) բերվում են փվյալ էջի ստորին հատվածում՝ յուրաքանչյուր էջում սկսելով 1 թվային համարակալումով (Restart each page), 9 փառաչափով:

9. Նոդվածի վերջում գրել հոդվածի վերնագիրը 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն (մեծատառերով):

Խոնրագրական խորհուրդ

Խմբագիր՝	ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ
Նամակարգչային շարվածքը և ձևավորումը՝	ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ
Սրբագրիչ՝	ՊԱՏՎԱԿԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝	ԱՄՅԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Տպագրությունը օֆսեթ, չափերը 68x100, թուղթը՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 300, հրատ. մամուլը՝ 8,5:

Տպագրվել է «-----» տպագրատանը
(հասցեն՝ ք. Երևան, -----)